

Խմբագրական

ՄԱՅԻՍ ԱՄԻՍԸ՝ ՎԵՐԱԶԱՆԹՕՆՔԻ ԱՄԻՍ Է



Մայիս ամիսը յաղթանակներու ամիս է, Եղեռնայուշ եւ մահաբեր Ապրիլէն ետք, Հայկեան ոգիի վերազարթօնքի, վերածնունդի ամիս...

Այդպէս էր 1918-ի Մայիսին, երբ հայրենասահմանուած ու տանջակոծ մեր ժողովուրդի մնացորդացը, մահու-կենաց սահմանագիծին վրայ, իր մէջ ոյժ գտաւ, բռունցքուեցաւ՝ որպէս մէկ, միասին ու միակամ ժողովուրդ՝ ընդդէմ թուրք ոհմակներուն, որոնք հայուն հողին եւ արեան ծարաւի, եկեր էին իլելու վերջին պատառը հայոց հողին, ամբողջ

Արեւմտահայաստանը հայաթափելէ եւ անոր բնիկ ժողովուրդը բռնի տեղահանելէ ետք...: Բռունցքուեցաւ մեր ժողովուրդի մնացորդացը հրաշագօր ոյժով՝ պաշտպանելու համար իր վերջին բեկորը հայրենեաց հողին եւ տարաւ հերոսական յաղթանակները՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէի, անգամ մը եւս հաստատելով իր ապրելու իրաւունքը եւ նուաճելով իր սրտաչափ հայրենքը, իր սեփական անկիւնը աշխարհի քարտէսին վրայ: Կենքի կոչուեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութիւնը, վեց երկար դարերու պետականազուրկ կեանքէն ետք....

Եւ այսպէս, պամական այդ վճռական եւ վճռորոշ պահին, հայութեան միահամուռ ոյժերով ձեռքբերուած Սարդարապատեան յաղթանակներով, անողոք պայմաններու տակ, ընդ հուր եւ ընդ սուր, այլեւ քաղաքական խիզախ կամքով, կը ծներ Հայաստանի Ա. Հանրապետութիւնը Մայիս 28, 1918-ին, որ անկիւնադարձ մը կը կազմէ ժամանակակից հայոց պատմութեան մէջ, եւ որուն հարիւրամեակն է ընթացիկ տարին: Ըլլալով, յարատւելով, աշխարհի քարտէսին մէջ գեթ անկիւն մը ունենալով՝ ողբերգական բայց միաժամանակ գերբնական ճիգի մը արտայայտութիւնն էր ան, հայոց պատմութեան երթի գրաւական ու երաշխիք:

Այդպէս էր Հայրենական Մեծ Պատերազմի յաղթական աւարտին՝ 1945-ի Մայիսին, երբ ձայնասփիւռը պիտի յայտարարէր ի լուր աշխարհին. «Ֆաշիզմի նկատմամբ տարած մեր յաղթանակի ընթացքին, հայերը՝ սկսած շարքայիններէն մինչեւ մարշալ՝ անմահացուցին իրենց անունները խիզախ մարտիկներու չնսեմացող փառքով»:

Այդպէս էր 1992-ի Մայիս 8-ին, երբ հայկական ջոկատները իրենց փառապանծ աւարտին բերին՝ «Հարսանիք լեռներում» մարտական գործողութիւնը, ազատագրելով Շուշի բերդաքաղաքը, եւ Ս. Ղազանչեցւոց եկեղեցւոյ կիսաւեր գմբէթին վրայ շքեղօրէն ծածանեցաւ հայկական յաղթական եռագոյնը: Նորանկախ Հայաստանի պատմութեան ամենէն փառահեղ էջերէն մէկն է այս, անտարակոյս, մեր մարտիկներու ոգիի եւ հզօր կամքի փառապանծ յաղթանակի լուսաւոր էջը: Այդ օրը նաեւ կը համարուի Լեռնային Ղարաբաղի



Հանրապետութեան պաշտպանութեան բանակի ծննդեան օր, հայոց մարտունակ ոգիի յաղթարշաւի օր...

Այդպէս է նաեւ հիմա, երբ Ապրիլին սկսած Համաժողովրդական հզօր Շարժումը՝ Հայաստանի Հանրապետութեան ամբողջ տարածքին, առաջնորդութեամբ Նիկոլ Փաշինեանի, դարձաւ ազգային վերազարթօնքի հրաշագօր ոգիի արտայայտութիւն: Նիկոլ Փաշինեանի հմուտ առաջնորդութեամբ, քաղաքացիական, առանց բռնութեան, անհնազանդութեան երթերն ու խաղաղ գործողութիւնները ներգրաւեցին հայրենի լուսակիր երիտասարդներն ու ուսանողները մեծաւ մասամբ, օրէ օր աճող թիւերով եւ հարիւր հազարներու հասնող նկատառելի բազմութեամբ: Համաժողովրդական բողոքի շարժումը իր յաղթանակի առաջին հանգրուանը արձանագրեց 23 Ապրիլին, հրաժարումովը մեր երկրին բռնապետը դարձած վարչապետ Սերժ Սարգսեանի: Նիկոլ Փաշինեան կրցաւ ըմբոստութեան հզօր ալիքը գերծ պահել միջազգային յեղափոխական տարբեր գունաւորումներէ եւ տարբեր սայթաքումներէ, կրցաւ ստեղծել համահայկական ոգեւորութիւն, նոր յոյս ու հաւատք բոլորին մօտ, կոտրեց վախի, յուսալքութեան, համակերպողական կրաւորական թմբիրը, կեղծիքին, սուտին, անարդարութեանց շղթային յարմարուելու ստրկամտութիւնը: Ան ճշմարտօրէն կրցաւ ոգիի մեծ եւ լուսաւոր զարթօնք մը յառաջ բերել բոլորին մօտ, ներշնչելով ազատութեան, արդարութեան նոր հեռանկար: Ոգիի այդ յեղափոխութեան ալիքները վարարեցին համայն հայութիւնը ի Հայաստան եւ ի Սփիւռս...

Մայիսեան յաղթանակներու անքննելի տրամաբանութեամբ, համաժողովրդական շարժման առաջնորդը Նիկոլ Փաշինեան ընտրուեցաւ ՀՀ վարչապետ, Շուշիի ազատագրութեան տարեդարձի օրը՝ Մայիսի 8-ին, նոյն Մայիսեան հրաշքով եւ անկիւնադարձային նշանակութեամբ..

Հայաստանի Հանրապետութեան տարիներու արատաւոր, ապականած կառավարական համակարգի փլուզումն ու Նոր Հայաստանի վերյառնումը այսօր յոյսի, լոյսի, հաւատքի Նորոգ լիցքերով կը հրավառեն համայն հայութիւնը, վերածնող հայրենիքի շունչով կը համակեն գայն:

Ազգային նոր զարթօնքի ազդանշանը տուաւ Հայաստանը... Բաղձալի է որ ան դառնայ մեկնակէտը նոր զարթօնքի՝ տարագիր հայութեան Սփիւռքին համար եւս, ուր հայ կեանքը տակաւ կը լճանայ՝ հնացած եւ քարացած գործելաոճերու ճահիճին մէջ, ուր Նորահաս սերունդներու մօտ՝ տակաւ կը նահանջէ մեր լեզուն, տակաւ կը նահանջեն մեր հոգեմտաւոր արժէքները, կը խամրի հայկականութիւնը...

Հայրենական նոր արշալոյսին ճառագայթները, վստահաբար, Նորոգ լոյսով պիտի ողողեն նաեւ Սփիւռքը, անոր մատողաշ սերունդները մասնաւորաբար, քանզի լոյսի ընթացքը կը



յաղթահարե ամեն խոչընդոտ եւ կը հասնի բոլորին...եւ այդ լոյսին ներքոյ՝ ամեն հայ ինքզինք
կը ճանչնայ նորովի...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կիպրահայ

ՀԱՆՌԻՍՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐՈՒՄԾ ԶՕՐԱՎԱՐ ԱՆՌԻԱՆԻԿԻ



Շաբաթ 12 Մայիս 2018-ին, կ.ե. ժամը 6:00-ին, Յ.Բ.Ը.Մ.-ի Նիկոսիոյ ակումբի սրահին մէջ, տպաւորիչ հանդիսութիւն մը տեղի ունեցաւ նուիրուած՝ ազգային հերոս, Չօրավար Անդրանիկի, հովանաւորութեամբ Թեմիս Կաթ. Փոխ. Տ. Խորէն Արք. Տողրամաճեանի, կազմակերպութեամբ Յ.Բ.Ը.Մ.-ի Նիկոսիոյ Վարչութեան, ներկայութեամբը Պետական

Ներկայացուցիչ՝ Տէր Եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեանի, գաղութիս բոլոր կառոյցներն ու հատուածները ներկայացնող հոծ բազմութեան մը:

«Որպէս արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ» երգի ունկնդրութեամբ սկսաւ հանդիսութիւնը, ստեղծելով Չօրավար Անդրանիկի յիշատակին յատուկ ազգային ոգեշունչ մթնոլորտ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Տիկ. Ռուպինա Գույումճեան, որ յատկապէս ըսաւ. «Համախմբուած ենք այսօր միասնաբար նշելու Չօրավար Անդրանիկի անմահ յիշատակը, ազգային այն հերոսին՝ որ իր ազգային-ազատագրական սիրանքներով, արթնցուց ազատաբաղձ ոգին մեր ժողովուրդին, վերահաստատեց անոր ինքնավստահութիւնը, ներշնչեց քաջութիւն, ինքզինք պաշտպանելու ոյժ եւ կորով, հայրենասիրութեան մարտունակ ոգի: Ան հայոց պատմութեան Մեծերէն Է, ազգային մեր պարծանքն ու հպարտութիւնը, որուն անունը պիտի յիշուի դարձեւ դար»: Ապա ան ներկայացուց օրուան բանախօսը, ըսելով մասնաւորապէս.

«Երան Գույումճեան այն հազուագիւտ մտաւորականներէն Է, որ գիտէ խիզախօրէն բարձրաձայնել հայ կեանքի ցաւոտ խնդիրները, մատը դնել վերքին վրայ, զայն դարմանելու սրտացաւ մտահոգութեամբ: Իր գրիչը շիտակ Է, դիպուկ եւ անկաշառ: Ան ունի անկախ,անաչառ եւ համահայկական մտածողութիւն»:

Ապա խօսք առաւ Տիկ. Երան Գույումճեան, որ յատկապէս շեշտեց. «Այսօր, մեր հոգիներու հայեացքին դիմաց կ'աշտարակուի արծուենի կերպարը Չօրավար Անդրանիկի, որ տարիներու թաւալքին հետ աւելի եւս կը պայծառանայ, որպէս ազգային-ազատագրական ոգիի դարբնոց, որպէս արթնութեան եւ զգօնութեան կանչ, որպէս մեր Մեծ Երագի անլռելի դօղանջ...: Ան առասպել էր իր ողջութեան եւ մնաց այդպիսին իր մահէն ետք ալ, իր հրեղէն ձիով ու սուրով, ցասման պոռթկումը հայոց հողին, ըմբոստացման խոյանքը իր ժողովուրդին, հայոց պատմութեան մեծ դիւցազնը...: Շահան Շահնուր զայն արդարօրէն պիտի դասէր որպէս հայ ժողովուրդի չորս գագաթներէն մէկը, Ս. Մեսրոպի, Կոմիտասի եւ Կաթողիկէի հետ միասին:

Արդարեւ, ինքն Է, որ երկար դարերու ստրկական լռութիւնը խզեց, որպէս արծիւ սաւառնելով հայոց սեգ բարձունքներուն վրայ, իր հոգիէն թօթափելով եաթաղանի բռնութեան եւ սարսափի շղթան եւ ցնցեց հայ ժողովուրդի համակերպողական,



կրաւորական թմբիրը, արթնցուց անոր ըմբոստութեան ոգին, վերահաստատեց անոր արժանապատուութիւնը:...

Իր անհանգիստ ոգին այսօր ալ կը սաւառնի հայոց երկնակամարին վրայ, արծուեքոյն Արցախի սեգ լեռներուն վրայ, կը մտնէ ան ամէն ազատամարտիկի հոգիէն ներս, հայոց բանակի սահմանապահ զինուորներու հոգիէն ներս, անոնց ներշնչելով մարտական անկոտորում ոգի եւ ազգային-հայրենասիրական կորով, կը մտնէ ան ամէն հայու սրտէն ներս՝ ո՛ր որ ալ ըլլայ ան...մեր բոլորին մէջ կը թեւածէ ան, բոլոր ներկաներուն մէջ եւ նաեւ բացականերուն, անոնց՝ որ հայու արիւն կը կրեն իրենց երակներուն մէջ... եւ կը պատգամէ. «– Ամէն օր ձեր գլուխը բարձին դնելէ եւ քնանալէ առաջ, յիշեցէք, թէ այդ օրը ի՞նչ էք ըրած ձեր ազգին համար:...Անդրանիկ մեր հաւաքական խիղճն է, ազգային ոգիի մշտավառ ջահը եւ ուղեցոյց փարոսը:....(Խօսքը՝ ամբողջութեամբ, կարելի է կարդալ ստորեւ):

Այնուհետեւ, Տիկ. Մարալ Չոլաքեան-Ատուրեան ապրումով ասմուկքեց «Անդրանիկին» բանաստեղծութիւնը (Զեղինակ՝ Երան Գույումճեան):

Իր փակման խօսքին մէջ, Տէր Խորէն Արք. Տողրամաճեան բարձր գնահատեց Չօրավար Անդրանիկի համահայկական պատգամը՝ միասնականութեան, եւ անդրադառնալով Չօրավարին՝ «Գործս կիսատ մնաց» վերջին խօսքերուն, Սրբազան Զայրը արձանագրեց որ Չօրավարին գործը այսօր կը շարունակուի Զայաստանի մարտական բանակով, ժողովուրդով, Արցախով եւ զօրաւոր Սփիւռքով...եւ շեշտեց օրուան կոչն ու պատգամը՝ «Զայեր միացէ՛ք, միացէ՛ք հայեր»:

Պահպանիչ աղօթքով վերջ գտաւ բովանդակայից հանդիսութիւնը:

Այսու կը ներկայացնենք Տիկ. Երան Գույումճեանի խօսքը՝ կարճ յապաւումներով:

Այսօր, մեր հոգիներու հայեացքին դիմաց կ'աշտարակուի արծուէնի կերպարը Չօրավար Անդրանիկի, որ տարիներու թաւալքին հետ աւելի եւս կը պայծառանայ, որպէս ազգային-ազատագրական ոգիի դարբնոց, որպէս արթնութեան եւ զգօնութեան կանչ, որպէս մեր Մեծ Երագի անլռելի դօղանջ...: Ան առասպել էր իր ողջութեան եւ մնաց այդպիսին իր մահէն ետք ալ, իր հրեղէն ձիով ու սուրով, ցասման պոռթկումը հայոց հողին, ըմբոստացման խոյանքը իր ժողովուրդին, հայոց պատմութեան մեծ դիւցազնը...: Շահան Շահնուր զայն արդարօրէն պիտի դասէր որպէս հայ ժողովուրդի չորս գագաթներէն մէկը, Ս. Մեսրոպի, Կոմիտասի եւ Կաթողիկէի հետ միասին:

Արդարեւ, ի՛նքն է, որ երկար դարերու ստրկական լռութիւնը խզեց, որպէս արծիւ սաւառնելով հայոց սեգ բարձունքներուն վրայ, իր հոգիէն թօթափելով եաթաղանի բռնութեան եւ սարսափի շղթան եւ ցնցեց հայ ժողովուրդի համակերպողական, կրաւորական թմբիրը, արթնցուց անոր ըմբոստութեան ոգին, վերահաստատեց անոր արժանապատուութիւնը:

Ո՞վ էր Անդրանիկ Օգանեան:

Ան համեստ ընտանիքի զաւակ էր, ինչպէս եղած են մեր Մեծերէն շատեր: Ծնած է 1865 թուականի Փետրուար 25-ին, Սեբաստիոյ զաւառի հերոսաշունչ Շապին Գարահիսարի մէջ: Մեկ տարեկանին կը կորսնցնէ իր մայրը եւ կը յանձնուի իր քրոջ՝ Նազելիի խնամքին: 1885 թուականին, Շապին Գարահիսարի մէջ, յեղափոխական շարժում մը կը սկսի եւ



ինքնապաշտպանութեան խումբեր կը կազմուին: Անդրանիկ առաջիններէն կ'ըլլայ շարժումին միացող, որպէս արծիւ սաւառնելով անոր բարձրաբերձ լեռներուն վրայ...

Անդրանիկ Չելեպեան՝ իր «Չօրավար Անդրանիկ» կոթողային հատորին մէջ կ'արձանագրէ. «... Հայ Յեղափոխական Շարժումը «յեղափոխական» էր այն իմաստով, որ դարերէ ի վեր առաջին անգամն էր որ հայ երիտասարդը զենքը ձեռք կ'առնէր պաշտպանելու համար հայ գիւղացիին ինչքն ու պատիւը»:

Եւ այսպէս, 1890ականներու սկիզբէն իսկ, Անդրանիկի համար ճշդուած էր իր կեանքի ուղին.- Հրաժարիլ անձնական կեանքէ, եարի փոխարէն զենքը գրկել եւ բոլոր ուժերով նուիրուիլ Երկրի բազմաչարչար հայութեան ազգային ազատագրութեան պայքարին:

Սերոբ Աղբիւրի շունչին տակ մեծցած ու Սասնոյ սարալանջերուն վրայ տարիներով թրծուած Անդրանիկը՝ դարավերջին դարձած էր անվիճելի ղեկավարը Հայ Յեղափոխական Շարժման, եւ ի վերջոյ ազգային դիւցազն՝ հայ ազատագրական երեսնամեայ փշոտ ու արիւնոտ ճանապարհին վրայ:

Այդ ընթացքին, Անդրանիկին արդարօրէն պիտի շնորհուէին «խմբապետ»ի, «հայրուկապետ»ի, «Փաշա»յի, «հրամանատար»ի եւ «զօրավար»ի տիտղոսները եւ հուսկ «Ազգային Հերոս»ի բարձրագոյն կոչումը: Տակաւին, ան պիտի արժանանար ռուսական բանակի «Ս. Գեորգ» եւ այլ պատուանշաններուն... Անդրանիկ իբրեւ անգերագանց ռազմագետ ճանչցուեցաւ ու գնահատուեցաւ ֆրանսացիներէն, պուլկարներէն եւ այլ ազգերէ, որոնք զինուորական աստիճաններ ու շքանշաններ պարգևեցին իրեն: Նոյնիսկ թշնամին պատկառանքով տուաւ անունը անգլուգական հերոսին, որուն գլուխը երբեք չխոնարհեցաւ թշնամիին առջեւ եւ որուն երբեք չհասաւ թշնամիին գնդակը:

Անդրանիկի մարտական գործունեութեան եւ հերոսական քայլերուն գլխաւոր հանգրուանները եղան, ընդհանուր առմամբ, հետեւեալները.-

1891-1907 թուականները՝ Սասնոյ ապստամբութեանց ղեկավարումը, որոնց շնորհիւ Սասունի հայութիւնը կը վերագտնէր իր ինքնավստահութիւնը, դիմադրական ոգին, արժանապատուութիւնը:

- 1907-էն ետք Պուլկարիա հաստատուիլն ու Պուլկարիոյ մէջ Չինուորական վարժարանին կազմակերպումը:

- 1912-ին Պալքանեան պատերազմին մասնակցութիւնը՝ հայկական ջոկատի հրամանատարի պատասխանատուութեամբ եւ քաջարի մարտերով:

- 1914-ին Կովկաս տեղափոխուիլն ու Հայ Կամաւորական Շարժման գլուխն անցնիլը, իբրեւ Առաջին Կամաւորական գունդի հրամանատար եւ իր մղած հերոսական կռիւները, որոնց մէջ յատկապէս՝ Տիլմանի փառապանծ յաղթանակը, որով կը փրկուէր Վանի հայութիւնը ստոյգ բնաջնջումի վտանգէն:

Եւ հուսկ՝ 1918-ի մարտերը՝ Էրզրումէն մինչեւ Ալեքսանդրապօլ, Լոռի եւ Դիլիջան, Ջաւախք ու Ղարաբաղ, մինչեւ Չանգեզուրի պաշտպանութեան եւ ազատագրութեան հերոսամարտերը, որոնք վիթխարի նշանակութիւն ունեցան Չանգեզուրի յետագայ ճակատագրին համար մասնաւորապէս:



Այսպէս, Չօր. Անդրանիկ՝ իր զօրքով եւ տեղ-տեղ ալ իր հետ տարած գաղթականներով, եղաւ ու կռուեցաւ թշնամիին դէմ Սասունի, Տարօսի, Տիւմանի, Խոյի, Ջաւախքի, Երզրումի, Վանի, Բաղէշի, Ղարաբաղի, Ջուլֆայի, Նախիջեանի, Ալեքսանդրապոլի, Դիլիջանի եւ Չանգեզուրի մէջ..., ամենուր խիզախութեան, խրոխտ եւ անկոտորում հայրենասիրութեան սերմեր ցանելով... : Բռնակալութեան տակ կքած հայ ժողովուրդը Անդրանիկին մէջ տեսաւ իր վրիժառու բազուկը, հարազատ ժայթքումը իր սրտին ու ոգիին...

Աւետիս Ահարոնեան կ'արձանագրէ. «Անդրանիկը հայ ժողովրդի համար անհատ չէ, այլ մարմնացումն է մի հզօր ու անսասան գաղափարի: Եւ իբրև այդպիսին նա ժողովրդի երեւակայութեան մէջ առանձնացած, դիւցազնացած է...Առաջնորդ, շէֆ Եր ծնուած Անդրանիկ: Ամէն տեղ ու ամէն պարագաներում Անդրանիկ մտում Եր տիրական, իշխող ու հրամայող: ...Նրան լսելիս մարդ զգում Եր, որ համայն հայ ժողովուրդը այս անզուգական մարդու կրծքի տակ է ամփոփուած, ինչպէս ճուտերը թուխսի թելերի տակ...»: Հայաստանի Ա. Հանրապետութեան վարչապետ՝ Սիմոն Վրացեան կը նշէ. « ... Անդրանիկը եղաւ բառիս ամենալայն մտքով ազգային հերոս, որի ճակատը դափնէ պսակով զարդարեցին «Հայոց Կուսակնք» և հայ աշուղները փառքի երգեր ձօնեցին նրան»:

Անդրանիկ՝ խիզախ եւ յանդուգն ռազմագետ ըլլալէն բացի, օժտուած Եր քաղաքական բացառիկ հոտառութեամբ ու սուր բնագործ: 1908-ի Օսմանեան Սահմանադրութենէն ալ առաջ, ան իր խոր անվստահութիւնը յայտնեց երիտթուրքերու ցեղապաշտ ղեկավարութեան շեփորած ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան եւ արդարութեան ստապատիր լոզունգներուն: Անդրանիկ բնաւ չխանդավառուեցաւ Երիտասարդ Թուրքերու յաղթանակով եւ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումով: Իր դիրքաւորումը թուրքին հանդէպ մնաց միշտ անփոփոխ, վերջինը ըլլայ Սուլթանական, Իթթիհատական կամ Զեմալական: Ան կարծէք կը տեսներ զալիք դէպքերը՝ արծուէբիբ սրատեսութեամբ...եւ մերժեց օսմանեան Մեծիսին մէջ իրեն հրամցուած աթոռը եւ գնաց Պալքանները՝ յետոյ կռուելու համար բանթուրանական Էնվերներու դէմ, երբէք չզայթակղելով փառքի ու դիրքի որոգայթներէն: Աւա՛ղ, որքան ճիշդ Եր Անդրանիկ...: Երբ լուրը առաւ Ատանայի ջարդին, զօրավարը խորհրդածեց. «Երանի թէ հայ եւ թուրք եղբայրակցութիւնը այդքանով վերջանար» եւ աւելցուց. «Լաւ գիտցէք որ երբ առիթը գտնեն ընկեր Թալէաթներ, ձեզ ալ կոտորել պիտի տան»:

Յուլիս 28, 1914-ին՝ երբ կը պայթէր Առաջին Համաշխարհային Պատերազմը, Անդրանիկ՝ դարձեալ բացառիկ հեռատեսութեամբ, լուր դրկեց Պոլիս, որ բոլոր մտաւորականներն ու յեղափոխականները ձգեն քաղաքը եւ փախին, բայց մտիկ չըրին եւ, ինչպէս պիտի գրէր հերոսը «Հայրենիք» ամսագրին մէջ, «ասլանի պէս մարդիկ՝ ոչխարի պէս սպանդանոց գացին»:

1917-ի ռուսական Հոկտեմբերեան Յեղափոխութեամբ, Կովկասի եւ Արեւմտահայաստանի մէջ, դէպքերը իրարու պիտի յաջորդէին ճակատագրական թափով: Ռուս զինուորը բանակը լքելով երկիր կը շտապէր վերադառնալ: Թիֆլիսի մէջ, հայոց Ազգային Խորհուրդին եւ արեւմտահայ ղեկավարներուն համար, օրուան հրատապ հարցը՝ ռուսերուն նահանջով ստեղծուած պարապոթիւնը լեցնելու հարցն Եր: Անդրանիկ, Թիֆլիսի իր «Հայաստան» թերթին մէջ, կը գրէր. «Պահենք, միասին պահենք Թրքահայաստանի սահմանները, որով պահած կ'ըլլանք Ռուսահայաստանի սահմանները: ... Առանց Թրքահայաստանի վտանգուած է Ռուսահայաստանը: ...Պէտք է վերցուի Ռուսահայ եւ Թրքահայ հարցը, պէտք



Է փակուիւն այդ խրամատները եւ միացած պետք է դիմել թշնամիին դէմ եւ այսպէս կռուիլ»։ Ան զգուշացուց թէ թուրքերը կանգ պիտի չառնեն 1914-ի ռուս-թրքական սահմանին վրայ, մինչեւ որ չհասնին Պաքու, հակառակ Պրետս-Լիթովսկի դաշնագրի պայմաններուն։ Աւա՛ղ որքան ճիշդ էր ան։

Փետրուար 27-ին ինկաւ Երզրումը։ 1918 Ապրիլ 10-ին, Չօր. Անդրանիկ Ալեքսանդրապոլի մէջ կազմեց իր «Հայկական Առանձին Հարուածող Չօրամասը», 1400 արեւմտահայ կամաւորներէ բաղկացած։ Ալեքսանդրապոլի անկումէն ետք՝ Ապրիլ 15-ին, Հայկական Առանձին Հարուածող Չօրամասը դիմադրեց թուրքերու յառաջխաղացքին, որպէսզի Անդրանիկի պաշտպանութեան տակ եղող գաղթականութիւնը ժամանակ ունենար յառաջանալու դէպի Լոռի։ Մայիս 22-ին ինկաւ Ղարաքիլիսէն։ Անդրանիկ վճռեց Դիլիջանը պաշտպանել մինչեւ իր վերջին մարդն ու փամփուշտը։

1918 Մայիսի վերջին, մահու-կենաց օրերուն, երբ Երեւանը եւ Էջմիածինը սպառնալիքի տակ էին, բոլոր հայերը միակամ եւ միասիրտ՝ մէկ միասնական բռուցք դարձած, կրցան ո՛չ միայն թուրքերուն յառաջացումը կեցնել Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսէի հերոսական ճակատամարտերուն մէջ, այլեւ նոյնիսկ ե՛տ մղեցին զանոնք։

Չուգահեռաբար, Պաթումի մէջ, Անդրկովկասեան Հանրապետութիւնը քայքայման ճամբու մէջ մտաւ։ Մայիս 26-ին, Թիֆլիսի մէջ յայտարարուեցաւ Վրաստանի անկախութիւնը։ Մայիս 27-ին, ազրպէյճանցիները առած էին նոյն քայլը։ Մայիս 26, 1918-ին, թուրքերը վերջնագիր տուին հայ պատուիրակներուն, որպէսզի յայտարարեն Հայաստանի անկախութիւնը։ Յովհաննէս Բաջազնունիի բնութագրումով, անկախութիւն չյայտարարելու պարագային, «Հայաստան կը մնար «ոչ ոքի պատկանող իր», ու իբրեւ այդպիսին բաժին կը դառնար դրացիներուն։ Հետեւաբար, 1918 թուականի Մայիս 28-ին, բացարձակ անհրաժեշտութիւն էր Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը, որքան ալ ծանր ու դաժան ըլլային թուրքերու դրած պայմանները։ Եւ այսպէս, քաղաքական յանդուզն կամքով, թուրքերու պարտադրանքով, այլեւ Սարդարապատի, Բաշ- Ապարանի եւ Ղարաքիլիսէի հերոսամարտերու փառապանծ յաղթանակով, ընդ հուր եւ ընդ սուր, ծնունդ պիտի առնէր Հայաստանի անկախ Հանրապետութիւնը, Մայիս 28, 1918-ին, որ անկիւնադարձ մը կը կազմէ ժամանակակից հայոց պատմութեան մէջ, եւ որուն հարիւրամեակն է ընթացիկ տարին։ Ըլլալո՛ւ, յարատեւելո՛ւ, աշխարհի քարտէսին մէջ գէթ անկիւն մը ունենալո՛ւ գերբնական ճիգի մը արտայայտութիւնն էր ան, հայոց պատմութեան երթի գրաւական ու երաշխիք։

Պաթումի դաշնագիրը ստորագրուեցաւ «Հայաստանի Հանրապետութեան» եւ Թուրքիոյ միջեւ, 1918 թուականի Յունիս 4-ին։ Պաթումի Դաշնագրին պատճէնը աչքէ անցնելէ ետք, Անդրանիկի սիրտը կ'ալեկոծի։

-Հայաստան, ուրեմն, առանց Ալեքսանդրապոլի, առանց Կարսի, առանց Սուրմալուի, առանց Ղարաբաղի, առանց Չանգեզուրի, առանց Նախիջեւանի։

-Հայաստանը պետք է ունենայ միայն 1200 զինուոր, ան ալ թուրքի հակակշռին տակ, եւ միայն 13 քիլոմէթր երկաթուղի։

-Արգիլուած է զինուած խումբերու կազմակերպումը Հայաստանի հողին վրայ,- եւ Վեհիպ փաշան պայման դրած է նաեւ որ ինքը՝ Անդրանիկ, պարտաւոր է ցրել իր 1200 զինուորները։



Վերջացնելէ ետք Պաթումի Դաշնագրին ընթերցումը, Անդրանիկ հեռագրեց հայկական զօրաբանակի հրամանատարութեան, թէ՛ «Այս հաշտութեան պայմաններով, դարերու ստրկութեան շղթան դուք ձեր ձեռքով ձեր վիզը ու ձեր ոտքերը անցուցիք»:

Այսպէս, ան բացարձակապէս մերժեց թուրքերուն հետ հաշտութիւն կնքել եւ շարունակեց իր կռիւը նորաստեղծ Հայաստանի սահմաններէն դուրս, ի մասնաւորի Չանգեզուրի մէջ: Սիսիանի, Չանգեզուրի եւ Ղափանի շրջաններու ինքնապաշտպանութեան գործերը կարգի դնելէ ետք, հայոց առասպելական Չօրավարը ուզեց հայկական Ղարաբաղն ալ իր հակակշռին տակ պահել: Չօր. Անդրանիկի Հայկական Առանձին Հարուածող Չօրամասը քանդեց շրջանի թուրք ու թաթարական բոլոր աւազակաորջերը: Դեպի Շուշի յառաջխաղացքին համար, ոչ մէկ արգելք մնացած էր: Այս հանգրուանին, սակայն, Պաքուի դաշնակից ուժերու ընդհանուր հրամանատար Չօր. Թոմսըն միջամտեց ու արգիլեց Անդրանիկի յառաջխաղացքը Դեկտեմբեր 1918-ին, պատճառաբանելով թէ Մուտրոսի մէջ Չինադադար կնքուած է: Յամենայնդէպս, Անդրանիկի ներկայութիւնը Հայաստանի մէջ իսկական օրհնութիւն մը եղած էր Չանգեզուրի, Սիսիանի եւ Ղափանի 60,000-ի հասնող հայ ազգաբնակչութեան համար, զանոնք փրկելով ստոյգ բնաջնջումէ:

Անդրանիկ վերջնականապէս կը մեկնէր Չանգեզուրէն 1919, Մարտ 25-ին: Ան իր զօրամասով իջաւ Էջմիածին, եւ իբրեւ ողջախոհ քաղաքագետ եւ անմասցորդ հայրենասէր, ցրեց իր զօրագունդը, զէնքերը յանձնեց Գեորգ Ե. Կաթողիկոսին, խուսափելու համար մանաւանդ եղբայրասպան կռիւէ, քանզի հայ-թուրք համաձայնութեամբ՝ Անդրանիկ պետք էր ցրէր իր զօրագունդը եւ հեռանար Հայաստանէն:

Անչափ սրտառուչ է Չօրավարին նամակը ուղղուած իր «այն զինուորներուն, որոնք մինչեւ վերջ կանգնեցան իր կողքին եւ կերտեցին հայուն փառքը»: Կը մէջբերեմ անոր քանի մը տողերը.

«Սիրելի զինուորներս,

....Դուք գիտցաք կռուիլ անոր համար, որ դուք կը հասկնայիք անոր արժէքը: Դուք կրցաք պարտութեան մատնել թշնամին եւ հիացում հրաւիրեցիք ձեր վրայ անոր համար որ գիտէիք նուիրուիլ եւ գիտէիք ծառայել հայրենիքին եւ անոր ազատութեան:

....Մեծ համբերութեամբ կրեցիք ձեր չարչարանքները եւ մեծ հաւատքով տարիք ձեզի յանձնուած գործը: Ես չլսեցի տրտունջի որեւէ բառ, ցաւի որեւէ արտայայտութիւն:

Մերկ էիք, անօթի էիք եւ այդպէս մնացիք օրերով: Ձմրան ցուրտը, բուքն ու քամին, ձիւնն ու անձրեւը ծեծեցին ձեզ, կարկուտը հարուածեց, բայց դուք արհամարհեցիք, ինչպէս թշնամին գնդակները:

Ձեր այս կեցուածքը քաջալերեց զիս, ուրախացուց սիրտս եւ մենք կրցանք շահիլ փառաւոր յաղթանակներ հայ անունին համար...»:

Անդրանիկ արտասահման գալով նախ մնաց Փարիզ: Ան ամուսնացաւ իր քրոջ ընկերուհիին՝ Նուարդին հետ, եւ իր յետագայ տարիները տրամադրեց հանգանակութիւններու եւ աղէտեալներու ու վիրաւոր զինուորներու կարիքներուն, գործակցելով Ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպար Փաշային հետ: Ժողովուրդը լիաբուռն կը բանար իր սիրտն ու քսակը անոնց կոչերուն դիմաց:



Անդրանիկ կը մահանար Օգոստոս 31, 1927-ին: Իր վերջին խօսքերն էին՝ «Մարմինս օտար հողի վրայ չբողո՛ւք: Անպայման Հայաստան փոխադրե՛ք», «Գործս կիսատ մնաց»:

Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումէն շուրջ 10 տարի ետք՝ 20 Փետրուար 2010-ին, իր աճիւնները կը փոխադրուէին Մայր հայրենիք եւ կը յանձնուէին հայրենի հողին՝ Եռաբլուրի մէջ, հայրենիքի համար ինկած նահատակներուն կողքին:

Զօրավար Անդրանիկ իւրայատուկ դպրոց է նորահաս եւ գալիք սերունդներուն՝ անկոտրում արիւութեան եւ քաջութեան, խրոխտ արժանապատուութեան, մեր հաւաքական ոյժին ապահովելու իմաստութեան, հայոց բռնախլուած Հողին տէր կանգնելու պահանջատիրութեան ոգիի, մեր դարաւոր ոսոխին՝ թուրքին, երբե՛ք չհաւատալու, անոր խաբէպատիր լոգունգներուն չվստահելու յստակատեսութեան, դէպքերն ու իրադարձութիւնները ճիշդ գնահատելու զգօնութեան եւ հեռատեսութեան, համազգային շահն ու տեսլականը՝ հատուածականին, կուսակցականին կամ անձնականին չզոհելու լայնախոհութեան եւ անշահախնդիր հայրենասիրութեան.. Արմատներով Արմենական, Զօրավար Անդրանիկ, եղած է նախ՝ հնչակեան, Շապին Գարահիսարի մէջ, ապա՝ դաշնակցական, ապա նաեւ՝ ՀԲԸՄ-ի եւ Պօղոս Նուպարի գործակից.. Իր դաւանանքը եղած է՝ «Իմ կուսակցութիւնը իմ ազգն է», ահա թէ ինչու ան համազգային հերոս է, որ երբեք չկաղապարուեցաւ որեւէ կուսակցական կաղապարի մէջ, մնաց համահայկական շահերու, համազգային իտեալի ու տեսլականի, մեր Մեծ Երազի անմնացորդ նուիրեալն ու հերոսական պաշտպանը: Տակաւին, ան դպրոց է ազգային արժանապատիւ վարք ու բարքի, սեփական երջանկութիւնը ժողովուրդին ազատութեան եւ երջանկութեան հետ նոյնացնելու վեհանձնութեան: Յիշենք իր յայտնի խօսքերէն. «Ես կեանքիս մէջ երբեք չեմ ձգտած անձնական երջանկութեան ու բարօրութեան: Ես մշտապէս ձգտեր եմ միայն մէկ բանի եւ պայքարած եմ միայն մէկ բանի՝ իմ հարազատ ժողովուրդիս ազատութեան եւ բարօրութեան համար: Ես չեմ փնտռեր իմ վաստակիս գնահատականը եւ կը փափաքիմ միայն, որ երջանիկ ըլլայ այն ժողովուրդը, որուն ես ծառայած եմ ամբողջ կեանքիս ընթացքին»:

Իր անհանգիստ ոգին այսօր ալ կը սաւառնի հայոց երկնակամարին վրայ, արծուեբոյն Արցախի սեզ լեռներուն վրայ, կը մտնէ ան ամէն ազատամարտիկի հոգիէն ներս, հայոց բանակի սահմանապահ զինուորներու հոգիէն ներս, անոնց ներշնչելով մարտական անկոտրում ոգի եւ ազգային-հայրենասիրական կորով, կը մտնէ ան ամէն հայու սրտէն ներս՝ ո՛ր որ ալ ըլլայ ան...մեր բոլորին մէջ կը թեւածէ ան, բոլոր ներկաներուն մէջ եւ նաեւ բացականերուն, անոնց՝ որ հայու արիւն կը կրեն իրենց երակներուն մէջ... եւ կը պատգամէ. «– Ամէն օր ձեր գլուխը բարձին դնելէ եւ քնանալէ առաջ, յիշեցէք, թէ այդ օրը ի՞նչ էք ըրած ձեր ազգին համար...Անդրանիկ մեր հաւաքական խիղճն է, ազգային ոգիի մշտավառ ջահը եւ ուղեցոյց փարոսը:

Ազգային հերոսին վերջին խօսքը վերջապէս՝ «Գործս կիսա՛տ մնաց» սրտագին կոչ ու պատգամ է նորահաս եւ գալիք սերունդներուն՝ շարունակելու մեծն Զօրավարին գործը, չմոռնալու պանդուխտ Արարատն ու բռնագրաւեալ Արեւմտահայաստանը, եւ բոլորանուէր ճիգերով ու սրբազան յանձնառութեամբ Իրաւատերն ու Պահանջատէրը ըլլալու մեր Հողային Ղաւթին:

Զօրավար Անդրանիկ կը մնայ գերագոյն խորհրդանիշը ազգային ազատաբաղձ ոգիին, հայ ազատագրական Շարժման պատմութեան ամենափայլուն ռազմական դէմքը, որ ալեկոծեց



հայ ժողովուրդի ազատատենչ, հերոսատենչ ոգին եւ դարձաւ ամենէն հոյակապ մարմնացումը՝ մեր սրբազան ըմբոստութեան: Անոր մշտարթուն ոգին տակաւին պիտի տանի ազգն ու հայրենիքը դէպի նորանոր խոյանքները ազատ, արդար եւ արժանապատիւ կեանքի Յայաստանի, Արցախի եւ հայաշխարհին մէջ, դէպի նորանոր շողարձակումները Յայ Յոգիին, դէպի մեր մեծ Երագի իրականացումը: Առասպելական դիւցազն, Սասունցի Դաւիթին նման, որուն անունը պիտի յիշուի դարե դար եւ սերունդէ սերունդ...որպէս «հայրենիքի տէր ու պաշտպան»:

Փա՛ռք ու պատի՛ւ եւ խորի՛ն խոնարհում հայոց Մեծ ու Անմահ Դիւցազնին:

ԱԶԱՏ ԽՕՍՔ



Կիպրահայ

ՈԳԵԿՈՉՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-րդ ՏԱՐԵԼԻԾԻ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ



Կիպրահայուկները՝ մեկ սիրտ, մեկ հոգի, միացած հոգեկին ամբողջ հայրենիքի հետ՝ հայրենիքի, Արցախի եւ ի սփիւռս աշխարհի, ոգեկոչեց հայկական Ցեղասպանութեան 103-րդ տարելիցը, խոնարհելով մեր մեկ ու կէս միլիոն սուրբ Նահատակներու յիշատակին...ուր « սրտերը քովէ-քով եղան մեկ խորան...», խորան՝ խունկ ու աղօթքի, խորան՝ ոգեկոչումի...այլեւ իմաստնութեան, պահանջատիրական պայքարի

վերանորոգման: Խորան՝ Նորոգ ուխտի, հասնելու մեր վախճանական Նպատակին՝ մեկ ամբողջական հայրենիք եւ մեկ ամբողջական Հայաստանին

Հայկական ցեղասպանութեան 103-րդ տարելիցի ոգեկոչման Կիպրոսի գլխաւոր ձեռնարկը տեղի ունեցաւ Երեքշաբթի 24 Ապրիլ 2018-ին, կ. ե. Ժամը 5:30-էն սկսեալ, երբ քայլարշաւը սկիզբ առաւ Նիկոսիոյ «Չինա Կանթեր» փողոցէն, որուն յետոյ միացաւ հոծ բազմութեան քայլարշաւը՝ Արմենիաս պողոտայէն մինչեւ Նահատակաց յուշարձան, գլխաւորութեամբ Պետ. Ներկ. Տնօրէն Վարդգէս Մահտեսեանի, Թեմական եւ Վարչական մարմիններու ներկայացուցիչներու, Ցեղասպանութեան Ոգեկոչման Կիպրոսի Յանձնախումբի անդամներու, որոնց կը հետեւէր հոծ բազմութիւն մը, ուր ուշագրաւ էր ՀՍԸՄ-ի հայ սկաւառներու, երիտասարդներու աշխոյժ մասնակցութիւնը՝ դրօշակներու եւ պաստառներու ուղեկցութեամբ:

Ժամը 7:30-ին, բոլոր մասնակիցները համախմբուեցան Նիկոսիոյ Նահատակաց յուշակոթողին առջեւ, ուր տեղի ունեցաւ Ոգեկոչման ձեռնարկը, ներկայութեամբ

պետական բարձրաստիճան անձնաւորութիւններու, կուսակցապետերու, խորհրդարանականներու, բանակի հրամանատարներու, կիպրահայ թեմական-վարչական, կրթական եւ ազգային այլ մարմիններու անդամներու, կիպրահայ եւ կիպրացի յոյն հանրութեան հոծ բազմութեան:

«Տերունական աղօթք»էն ետք, Սրբազան Հայրը եւ Տէր Մովսիկ քինյ. Հապէշեան միասնաբար երգեցին Նահատակներուն խորհրուած աղօթքը: Այնուհետեւ, Թեմիս Կաթ. Փոխ. Տէր Խորէն Արք. Տողրամաճեան հոգեյոյզ խօսք արտասանեց, շեշտելով այն փաստը որ թուրքին գործադրած Ցեղասպանութենէն ետք, հայերը Հայաստաններ ստեղծեցին հո՛ն ուր հանգրուանեցին, կառչած մնացին իրենց լեզուին, ինքնութեան, պատմութեան ու մշակոյթին, արարեցին, ստեղծեցին...: Այսօր, ըսաւ ան, մենք ունինք ազատ, անկախ Հայաստան, Արցախի Հանրապետութիւն, զօրաւոր բանակ, եւ թուրքը չի կրնար դարձեալ Նահատակել մեզ, ո՛չ ալ անոր եղբայրը՝ ազերին, որ 2016-ի Ապրիլին փորձեց Նոր Սումկայիթ



սարքել ու ձախողեցաւ, շնորհիւ մեր քաջարի եւ մարտունակ բանակին: Թուրքը, աւելցուց ան, նոյն թուրքը կը շարունակէ ըլլալ, ան բռնագրաւուած կը պահէ հիւսիսային Կիպրոսը, մեր Մակարապանքը, մեր հողերը: Բայց մենք պիտի պայքարինք շարունակ միևչել տուն բերենք Արարատը, ամուր պիտի փարինք մեր հայրենիքին, մեր ինքնութեան, պատմութեան ու մշակոյթին: Ոգեկոչման հանդիսութիւնը, ընդգծեց Արքեպիսկոպոսը, խօսքը յատկապէս ուղղելով երիտասարդութեան, մեր ուխտի վերանորոգման առիթ է, հաւատարիմ մնալու մեր նահատակներու սուրբ կտակին:

Ապա խօսք առաւ Պետ. Ներկ. Վարդգէս Մահտեսեան, որ յունարէն լեզուով անդրադարձաւ 1915-1923 թուականներուն թուրքին գործադրած Ցեղասպանութեան, որուն նպատակն էր բանթուրանական հսկայ պետութիւն մը ստեղծել, ուր հայերը, յոյները, ասորիները սեպ մըն էին այդ ճանապարհին վրայ, նշեց Թուրքիոյ ուրացման եւ ժխտումի քաղաքականութիւնը, ուր պատմութիւնը նենգափոխուած կը հրամցուի թուրք նոր սերունդին եւ այլ միջոցներուն:

Իր խօսքի աւարտին, Պետական Ներկայացուցիչը արտայայտեց իր անկեղծ երախտագիտութիւնը իր ծննդավայր Կիպրոսին, որ հանդիսացեր էր առաջին Եւրոպական երկիրը եւ՝ երկրորդը աշխարհիս մէջ՝ հայկական Ցեղասպանութեան ճանաչման խիզախ քայլը առնելուն մէջ, միահամուռ կերպով որդեգրուած Կիպրոսի Խորհրդարանին կողմէ:

Յուսկ, խօսք առաւ Կիպրոսի Խորհրդարանի նախագահ Տիմիթրիս Սիլլուրիս, որ նշեց որ հայկական Ցեղասպանութիւնը սկսեր էր դեռ 1890-ական թուականներուն, երբ հայերը շուրջ 300,000 զոհ տուեր էին, ապա՝ շարունակուեր էր 1909-ին՝ Ատանայի մէջ, ուր 30,000 հայեր զոհուեր էին թուրքին եաթաղանին, ապա ան իր լրումին հասեր էր Առաջին Յամաշխարհային Պատերազմի օրերուն, մէկ ու կէս միլիոն հայերու նահատակութեամբ: Աւելին, անոնք տեղահանուելով իրենց հայրենի բնօրրանէն, ցրուեր էին աշխարհով մէկ: Անոնց մէկ մասը եկեր էր Կիպրոս, ուր մերուելով երկրին հասարակական կեանքին, իրենց ներդրումը բերեր էին բոլոր բնագաւառներէն ներս: Ան նաեւ յատկապէս ընդգծեց Ցեղասպանութեան 100-ամեակի տարուան առիթով կայացած կարգ մը ձեռնարկներուն եւ Կիպրոսի որդեգրած օրինագիծը՝ 2015-ին, որով հայկական Ցեղասպանութեան ժխտումը կը դառնար քրեօրէն պատժելի արարք:

Ոգեկոչման հաւաքի աւարտին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ Տիկ. Նառա Սարգարատեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Երեցկին Թամար Յապէշեանի, կատարեց «Չարթիր լաօ, մոնիմ քըզի», «Ատանայի ողբը», «Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա» եւ այլ ազգային- հարենասիրական երգեր:

Յուսկ, յուշակոթողին ծաղկեպսակներ զետեղեցին պետական պաշտօնական անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ կիպրահայ կեանքի ազգային-եկեղեցական կառոյցները ներկայացնող անձինք եւ ներկայ հանրութիւնը՝ մեկական մեխակ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ԱՉԱՏ ԽՕՍՔ

Հարցազրոյց

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»Ի—ի գրուցակիցն է Պերլինի համալսարանի դասախօս, հայագետ Ժիրայր Քոչարեանը:



Պարոն Քոչարեան, ինչպե՞ս էք գնահատում Հայաստանում ստեղծուած իրավիճակը: Շարժումը յաղթանակով աւարտելու դէպքում ի՞նչ է սպասում Հայաստանին, և ի՞նչ է սպասում պարտութեան դէպքում:

– Շարժումը յաղթանակով աւարտելու դէպքում առաջին հերթին սպասում է լուրջ աշխատանք: Ես կարծում եմ, որ համակարգը պէտք է փոխուի: Եւ շատ բան չի փոխուի, եթէ մի քանի հոգի գնան: Յատկապէս,

որ ՀՀԿ-ն պէտք է բնաւ եկող իշխանութեան մաս չկազմի, այսինքն՝ օլիգարխիկ, կլանային համակարգը պէտք է վերանայ: Դա որ վերացաւ, մեզ սպասում է իսկապէս լուրջ, տքնաջան աշխատանք, որպէսզի ժողովրդավարական, արդար պետութիւն ստեղծենք:

Պարտութեան դէպքում կը վերադառնանք նոյն հարցերին, նոյն կէտին, ինչպէս որ կար:

– Եւրոպան որեւէ կերպ պե՞տք է ներգրաւուէր այս բանակցութիւններին, թե՛ ոչ: Ռուսաստանն անընդհատ կոչեր արեց, ԱՄՆ Պետդեպն էլ, ԵՄ-ն էլ, բայց բանակցութիւններին ներգրաւուելու, խառնուելու քայլ չկար: Դա ճի՞շդ էր, թե՛ սխալ:

– Ես կարծում եմ, որ ճիշդ էր չխառնուելը: ԱՄՆ-ի կամ Ռուսաստանի կողմից կոչերն ու յայտարարութիւններն էլ աւելորդ են: Սա ներհայկական խնդիր է, և այս հարցը պէտք է հայերը լուծեն: Անցեալում էլ նմանատիպ կոչեր շատ են եղել և տեղ չեն հասել և այս պարագայում էլ չպէտք է հասնեն: Սրանք մեր ներքին խնդիրներն են, և մենք պէտք է սրանք լուծենք:

– Մենք տեսնում ենք, որ Ռուսաստանը հետեւողականօրէն փորձում է միջամտել՝ խեղաթիւրելով իրականութիւնը և տեղի ունեցողը համեմատում մայրանիսի հետ:

– Ենթադրում եմ, որ Ռուսաստանը ունի որոշ շահեր, և ՀՀԿ-ն այդ շահերը յանձնել է Ռուսաստանին: Եւ հիմա Ռուսաստանը մտահոգուած է, որ կարող է պատահել՝ եկող իշխանաւորներն այդքան առատաձեռն չլինեն, որքան հանրապետականները: Բայց միւս կողմից՝ ամեն ինչ կախուած է մեզնից, թէ մենք մեզ ինչպէս ենք դրսեւորելու, ինչպէս ենք աշխատելու, ինչ ճանապարհ ենք գտնելու: Դրսի խնդիրները, ճիշդ է, կարելի են, ունեն իրենց ազդեցութիւնը, բայց առաջին դերը խաղում են հենց Հայաստանի ժողովուրդը և իր կողմից ընտրուած իշխանութիւնը:

– Ի վերջոյ, ի՞նչ էր, ըստ Ձեզ, տեղի ունեցածը, ինչպե՞ս է այն գնահատում աշխարհը:



– Աշխարհը դեռեւս չի կարողանում ճիշդ գնահատել՝ ինչ է տեղի ունենում, քանի որ մանրամասներին տեղեակ չէ: Բոլոր մանրամասներին տեղեակ չեմ նաև ես, քանի որ Չայաստանում չեմ ապրում, բայց պետք է ասեմ, որ մինչև հիմա ամեն ինչ լաւ է ընթացել: Միայն մի բաց եմ նկատում՝ ես մտաւորականներին քիչ եմ տեսնում, մեծաւ մասամբ երիտասարդներն են, բայց ես կ'ուզէի, որ ժողովուրդն ու մտաւորականութիւնն էլ բաժին ունենային: Իսկ թէ ինչն է պատճառը, գուցէ յանկարծակիի են եկել, գուցէ չէին սպասում, բացի այդ, երիտասարդներն աւելի յամառ են, աւելի անհոգ են, գուցէ իրենց ապագան վտանգուած են տեսնում: Ես այս օրերին մտաւորականութեանը չեմ տեսնում մասնակից: Լավ կը լինէր, որ ժողովուրդն ու մտաւորականութիւնն էլ մասնակից լինէին: Եւ եթէ այս բոլորը միասին մտածեն և աշխատեն, նոր ուղիներ փնտռեն, Չայաստանի ապագան աւելի լաւ է լինելու:

– Պարոն Քոչարեան, սա ներքաղաքական խնդիրներով պայմանաւորուած շարժում էր, որը չունէ՞ր արտաքին հասցեատեր:

– Այս շարժումը հայկական ներքին շարժում է, և չեմ հաւատում ասեկոսներին, որ դրսից էր հրահրուած: Աւելորդ է ասել, որ դատական համակարգը անկախ չէ, որ ամեն տարի 40.000 մարդ է հեռանում Չայաստանից, աշխատանքի խնդիր կայ, նաեւ քաղաքական ճնշումներ կան: Սրանք տարիներով շարունակուող գործընթաց էին, և ՀՀԿ-ն դեղամիջոց չգտաւ այս խնդիրները լուծելու համար: Ցուցարարները մտածում են, որ սրա վերջը պետք է տայ, և իրաւունք ունեն նման կերպ մտածելու: Այս ամենը նորութիւն չէ:

Յեղիակ՝ Սիրանոյշ Պապեան

Յօդուածներ

ՀՐԱԲՈՒԽԸ

ՅԱԿՈՒ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



Ամբողջ ամիս մը տեւած բողոքի ցոյցերը ուրիշ բան չէին, եթէ ոչ հրաբուխ, որ տարիներ բանտուած անհանդուրժողութեան, բողոքի ու աստելութեան լաւան դուրս ժայթքեցուց: Մասիսները, որոնք յանգած հրաբուխներ են, վերակենդանացան, ապրեցան իրենց վերածնունդը ժողովուրդին մէջ. չէ՞ որ ամէն իսկական հայ Արարատ մը ունի իր սրտին մէջ:

Մայիսի 8, որ նուիրագործուած է որպէս Շուշիի ազատագրման օր, նոր զգեստաւորում մըն ալ ունեցաւ, երբ այդ օր ազատագրուեցաւ երկրին խիղճը ու յաղթանակեց արդարութիւնը:

Ասիկա, սիրոյ յաղթանակ ըլլալէ աւելի աստելութեան յաղթանակն էր: Ատելութիւն՝ տարիներ տեւած մենաշնորհութեան դէմ, անարդարութեան դէմ, փտածութեան դէմ, երկիրը թալանողներուն դէմ, իրենց պաշտօնները տարբեր անօրէն նպատակներու եւ սեփական շահի ծառայեցնողներուն դէմ:

Այո՛, ժողովուրդը յաղթեց: Այդ ե՛րբ է եղած, որ ժողովուրդները չեն յաղթած եւ չեն տիրացած իրենց արդար իրաւունքներուն: Կաթսային մէջի ճաշը մէյ մը որ սկսաւ եռալ, ուրեմն ուշ կամ կանուխ անպայման կափարիչը վեր պիտի նետէ ու յորդի: Եւ յորդեցաւ:

Աշխարհը զարմացաւ: Պճիկ Զայաստան մը աշխարհին դաս տուաւ, թէ ինչպէս կ'ըլլան անարիւն, թաւշեայ յեղափոխութիւնները, ոչ միայն սովորական թաւիշ, այլ՝ ձեռագործուած ու դրուագուած երգով ու պարով, ծափով ու ծիծաղով...

Մարդիկ ըսին, որ հայերուն դէմքին վրայ այսքան ծաղկուն ժպիտ չէին տեսած երբեք:

Յաղթեց հայու կամքը, յաղթեց Զայաստանը, Արցախը, համայն Սփիւռքը: Աշխարհի հայութիւնը այսքան միակամ ու յանուն գերագոյն նպատակի մը, այսքան գօտեպիտ, այսքան հաւատքով լեցուն չէր եղած բնաւ:

Զիմա, յաղթանակի շեփորահարութենէն ու ժողովրդային ցնծութենէն ետք, հին Էջերը փակելու եւ նոր Էջեր բանալու ժամանակն է: Զիմա խօսքերը գործի վերածելու ժամանակն է, եւ այս հանգրուանին ժողովուրդը իր պարտականութիւնը կատարած կարծելով, ծրագիրներուն իրականացումը նորակազմ կառավարութեան վստահելով, տունները քաշուելու եւ հանգստանալու չէ, այլ նոր վարչապետին հնչեցուցած խոստումներն ու ծրագիրները իրականացնելուն սատարելն է: Յեղափոխութիւնը ժողովրդային էր, բարենորոգումներն ալ ժողովրդային պիտի ըլլան, որպէսզի անոնց պտուղները վայելելու արդար իրաւունք ունենայ ժողովուրդը:

Նիկոլ Փաշինեան իր ճառին մէջ վերջակէտեր դրաւ իւրաքանչիւր փտածութեան (կոռուպցիա) յիշատակումէն ետք՝ «Եւ ՎԵՐՉ» ըսելով: Վերջ առանձնաշնորհեալներու, վերջ ապօրինութեանց ու թալանին, վերջ անարդարութեան, վերջ պաշտօններու



շահագործումին եւ այլն: Վարչապետին յիշատակած իւրաքանչիւր փտածութիւնը քայլ մըն էր երկիրը վերջնական անկումի տանող, որ յետ այսու կասեցուելու է եւ ետքայլ կատարելու է:

Այնքան հաւատքով ու հաստատակամութեամբ խօսեցաւ վարչապետը, որ կասկած չձգեց, որ անոնք սոսկ խօսքեր էին, որոնցմով օրօրած են սուտ ղեկավարները իրենց ժողովուրդները: Փաշինեան քաջ մարդ է, գուցէ անփորձ ամբողջ երկիր մը ղեկավարելու, սակայն այն ոգին որ դրսեւորեց, այն անկոտրում կամքը որ ընկրկում չճանչցաւ բողոքի բոլոր օրերուն եւ նաեւ Ազգային Ժողովի դահլիճին մէջ, կասկած չի թողուր, որ Հայաստանը պատրաստ է թեւակոխելու լուսաւոր նոր շրջան մը իր պատմութեան մէջ:

Հալալ է քեզի այս յաղթանակը, հայ ժողովուրդ:

Բարի երթ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:

Տեսակէտ

Աշխարհաքաղաքական Ակնարկ

ՍՈՒՐԻՈՑ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԿՐ ԳԾԷ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՊԱՏԿԵՐԸ

ՄԵԹՐ Գ. ՏԷՐՏԷՐԵԱՆ



Բ. Աշխարհամարտի վաղորդայինն ստեղծուած երկբեւեռ աշխարհակարգը՝ երբ միաբեւեռ դարձաւ, Սովետ Միութեան գլխաւորած Սոցիալիստական ճակատին քայքայումով ու ամերիկեան իմփերիալիզմի միահեծան աշխարհակալութեամբ, ԱՄՆ-ի ռազմական արդիւնաբերութեան ֆինանսատերներն ու Փենթակոնը «ոսկի առիթ» մը գտան իրենց մենատիրութիւնը տարածելու Արեւելեան Եւրոպայի երկիրներուն, Կեդրոնական Ասիոյ, Մերձաւոր Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի շրջաններուն վրայ, նաեւ՝ Անդրկովկասեան եւ Ռուսական Դաշնութեան իսլամական երկիրներուն մէջ, մշակելով երեք տարբերակով

ծրագիրներ: Եւրոպական եւ Անդրկովկասեան երկիրներուն մէջ՝ «Գունաւոր Յեղաշրջում»ներու, Հիւսիսային Ափրիկէի եւ Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ՝ «Արաբական Գարուն»ի պիտակին տակ, այդ երկիրները՝ ներսէն գրաւելու համար, եւ երրորդ տարբերակը՝ շինծու պատրուակներով ու անհիմն գրպարտութիւններով, ուղղակի գրաւելու, ներխուժումներով՝ Եուկոսլաւիոյ, Իրաքի, Լիպիոյ, Սուրիոյ եւ Եմէսի դէմ...: Այլ խօսքով՝ Սուրիոյ դէմ ներխուժումի ծրագիրը մշակուած էր 28 տարիներ առաջ, երբ ամերիկեւսիոնական տիրակալութիւնը վճռականօրէն մերժող առանցք մը կազմուած էր՝ Իրան-Սուրիա-Հրճպալլահ առանցքը: Սուրիա ներխուժումը նախապատրաստուած էր քսանամեայ խլրթային գաղտնի աշխատանքով՝ ռազմական ենթարկառոյցներու շինարարութեամբ ու հոն տեղադրելով ռազմական սարքերն ու ռազմամթերքը, եւ միւս կողմէ՝ մարզելով օտար բազմազգի վարձկան իսլամ ահաբեկիչներ, արիւնարբու ճիւղներու ջոկատներ, որոնց սկզբնական կորիզը կազմեցին՝ Աֆղանիստանի մէջ Պապրակ Զարմէլի ժողովրդահայրենասիրական սոցիալիստամետ ռեժիմին դէմ ԱՄՆ-ի պատրաստած ահաբեկիչները: (Եմէսի դէմ ներխուժումը եւս, երեք տարիներ առաջ, ամերիկեւսիոնական ծրագիրն էր, փոխանորդութեամբը՝ Սեուտական Արաբիոյ գլխաւորութեամբ կազմուած Ծոցի երկիրներու Դաշինքին, որ ձախողութեան մատնուեցաւ, քանի որ Եմէսի ժողովուրդին հերոսական դիմադրութեան օգնութեան հասաւ Իրան-Սուրիա-Հրճպալլահ առանցքը: Եւ վերջերս, ԱՄՆ-ի Պաշտպանութեան Նախարարը՝ Ճ. Մաթիս, խոստովանեցաւ որ Եմէսի դէմ պատերազմին վերջ պիտի տրուի... անշուշտ՝ ԱՄՆ-ի որոշումով, Սեուտական Արաբիոյ թախանձանքով... քանի որ ինք կը տուժէր այս պատերազմէն՝ եմէսցիներու պալլիսթիք հրթիռներէն, պատերազմը տարածելով Սեուտական Արաբիոյ հողամասին վրայ...:

2011 թ. Մարտին, երբ հրապարակ իջան Սուրիոյ վարչակարգէն իրաւացիօրէն դժգոհ՝ խաղաղ ու դեմոկրատական քաղաքացիները, Սուրիա ներխուժելու ժամը հնչած էր՝ ամերիկեւսիոնական իմփերիալիստներուն եւ անոնց շրջանային գիւնակիցներուն ու գործակատարներուն համար: Զաղաքացիներու այս ներքին ընդդիմադիր ճակատի պահանջները հիմնականօրէն արդար էին, բայց ճակատը՝ զուրկ էր կեդրոնական, հեղինակաւոր, փորձառու եւ քաղաքական հասունութիւն ունեցող ղեկավարութենէ,



որովհետե՛ս այդպիսի յատկութիւններ ունեցող ղեկավարները, որոնք կը պատկանէին այն օրինական կուսակցութիւններուն, մաս կը կազմէին Պաաս Կուսակցութեան գլխաւորած Ազգային Յառաջդիմական-Դեմոկրատական ճակատին, եւ չէին ստանձնած պահանջատիրութեան շարժումին առաջնորդութիւնը, ներառեալ՝ Սուրիոյ Կոսկումը: Ուրեմն, Շարժումը արդար էր, բայց՝ անգլուխ... քաղաքագիտական առումով, հաւանաբար ապակողմնորոշուած ըլլալով ամերիկեւսիոնական յուշարարներու կողմէ՝ «Արաբական Գարուն»ի կոյր լոգունգով...:

Արդար էր՝ որովհետեւ Պաշար Ասատ Նախորդ տասնամեակին (2001-2010) գործած էր երկու անսպասելի ու աններելի սխալներ: Հակառակ իբր թէ տիրող կուսակցութեան «սոցիալիստական»ութեան, որդեգրած էր Նոր-ազատական տնտեսութեան ծրագիրը, եւ՝ հակառակ Իսկէնտերունի Սանճաքի զաւթումին, որդեգրած էր՝ զաւթիչ Թուրքիոյ հետ յարաբերութեանց բնականոնացումի երազատեսական քաղաքականութիւն (նման՝ Հայաստանի իշխանութիւններու «Ֆոլթալոյային դիւանագիտութեան» կամ «ցիւրիխեան փրոթօքոլներուն»), եւ Թուրքիոյ առջեւ լայն բացած էր դուռը՝ թրքական բազմատեսակ արտադրանքներուն (հետեւելով՝ Նոր-ազատական դրամատիրութեան ազատ շուկայի սկզբունքին), որոնց մեծագոյն մասը կը սպառնար Սուրիոյ նմանօրինակ արտադրանքներու զոյատեւումին... փակելով եւ սնանկացնելով հազարաւոր աշխատանոցներ, բարձրացնելով գործազրկութեան բանակի թիւը, եւ ակեցնելով աղքատութեան տոկոսը երկրին մէջ...:

Երբ Պաշար Ասատ սկսաւ քաղաքացիներու պահանջատիրական անգլուխ շարժումին առջեւ որոշ զիջումներ կատարել, ամերիկեւսիոնական ճակատը անհամբերացաւ եւ շտապողականութեամբ գործի լծեց իր վարձկան զինեալները, որոնք մտան Շարժումին խաղաղ ցոյցերուն մէջ, եւ սկսան կրակել սուրիական ապահովութեան ուժերուն վրայ, եւ խաղաղ ցոյցերը վերածուեցան զինեալ բախումներու եւ... «քաղաքացիական պատերազմ»ի, որ իրականութեան մէջ՝ Գ. Աշխարհամարտի համազօր միջազգային պատերազմի սկիզբն էր, զոր ամերիկեւսիոնական ճակատը կը մղէր՝ փոխանորդութեամբը իր զինակիցներուն ու գործակատարներուն. Թուրքիոյ, Սեւտական Արաբիոյ եւ Յորդանանի: Իսկ Իսրայէլ՝ սկիզբը, կը մնար վարագոյրի ետին, բայց Էրտողանի Նոր-օսմանական Թուրքիան՝ գլխովին միտրուեցաւ այս ներխուժումին մէջ, Սուրիան գրաւելու եւ Պաշարը տապալելու նպատակով: Զսանամեայ Նախապատրաստութեամբ կազմ ու պատրաստ իսլամ ահաբեկչական ջոկատները դուրս եկան իրենց որջերէն, եւ՝ ներս խուժեցին Թուրքիոյ սահմանէն ալ, եւ շատ կարճ ժամանակի մը մէջ գրաւեցին մեծ տարածքներ, ոչ միայն մայրաքաղաքին շուրջ, այլեւ՝ Հիւսիսի եւ Հարաւի մէջ, եւ ասոնք՝ իրենց սպառած զինամթերքն ու այլ միջոցները կը ստանային Թուրքիայէն, Իսրայէլէն, Իրաքէն (ամերիկեան բանակէն...), Սեւտական Արաբիայէն (Լիբանանի ծովափէն, իրենց սիւննի լիբանանցի զինակիցներուն շնորհիւ...) եւ Յորդանանէն:

Սեւտական Արաբիոյ գրպանը մտած «Արաբական Լիկա» կոչուած բայց սիոնականացած կազմակերպութիւնը եւս, բացի փոքրաթիւ արաբական երկիրներէ, քաղաքականօրէն ու դիւանագիտականօրէն զինակցեցաւ ամերիկեւսիոնական ճակատին հետ՝ մեծամասնութեան ձայնով, եւ Սուրիա արտաքսուեցաւ սիոնականացած «լիկա»յէն: Պահ մը, ստեղծուեցաւ այն տպաւորութիւնը, որ Պաշարի տապալումը մօտալուտ է, եւ պիտի յաջորդէ՝ Թունիսի, Եգիպտոսի, Եմենի եւ Լիպիոյ Նախընթացներուն: Այդպէս չեղաւ ու պատերազմը երկարեցաւ, որովհետեւ Սուրիան տարբեր էր Պըն Ալի Թունիսէն, Մուկարաբի Եգիպտոսէն, Ապտալլա Սալէի Եմենէն, եւ Գազաֆիի Լիպիայէն:



Քանի որ, Սուրիոյ վարչակարգը միակն էր՝ Իսրայելի սահմանակից երկիրներու վարչակարգերէն, որ վճռապէս մերժեց կնքել Իսրայելի հետ անարդար խաղաղութիւնը եւ զայն ճանչնալու համաձայնութիւնը, ծախելով Պաղեստինեան Դատը: Մինչդէռ Եգիպտոս կնքած էր Բեւի Տէյվիտը, Յորդանան՝ Ուէտի Արապան, ՊԱԿ-ը՝ Օսլոն, իսկ Լիբանան (Էմին Ժեմալէ)՝ «17 Մայիս»ի համաձայնագիրը, որ վիժեցուեցաւ, եւ՝ կը նմանէր մեր Ալեքսանդրապոլի դաշնագրին...:

Նաեւ՝ Սուրիոյ վարչակարգը, առաջին իսկ օրէն, կանգնած էր Իրանի Իսլամական Յեղափոխութեան (1979) կողքին. միակը ըլլալով Արաբ երկիրներու վարչակարգերէն: Նաեւ՝ դատապարտած էր Սատտամի ոչ միայն ներխուժումը Իրան, այլեւ՝ Քուէյթ: Եւ ապահոված էր Իրանի եւ հետեւաբար ալ Յրդպալլահի հզօր նեցուկը իր դէմ շղթայագերծուած միջազգային պատերազմին մէջ:

Ապա նաեւ՝ Սուրիոյ վարչակարգին բանակը դաստիարակուած էր ազգային ազատագրութեան գաղափարականով՝ դպրոցական օրերէն սկսեալ, ընդդէմ՝ Իսրայելի, ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ, եւ հետեւաբար ունէր բարձր հայրենասիրական ոգի, եւ՝ վարակուած չէր թայֆեական խտրականութեան ախտով: Բանակը մնաց ամրակուռ ու մարտունակ, հակառակ զայն պառակտելու բոլոր ձեւերու ջանքերուն, զորս սիւննիական, ուսահապիական մոլեռանդութեամբ թափեցին Արաբ թագաւորներն ու Էմիրները, Սեուտական Արաբիոյ գլխաւորութեամբ եւ Էրտողանի Թուրքիոյ համագործակցութեամբ: Եւ ճիշդ այս մոլեռանդութեան դրօշին տակ է որ հաւաքագրուած էին նաեւ միւս իսլամ երկիրներէն վարձուած ահաբեկչական ջոկատները..., Սուրիա ներխուժելու ծրագրին բոլոր մասնակից ուժերուն կողմէ:

Եւ վերջապէս՝ խման Ելցինի օրով Ռուսաստանի կորսնցուցած հեղինակութիւնը վերականգնելու եւ Սուրիոյ մէջ գտնուող ռուսական ռազմափարիսիսին տիրութիւն ընելու նախանձախնդրութիւնը ունեցող Փութինի Ռուսաստանը, աշխարհաքաղաքագիտական հաշիւներով, ուղղակի միջամտեց Սուրիոյ դէմ մղուող այս պատերազմին, Պաշտար Ասատի պահանջով, ոչ միայն փրկելու համար անոր իշխանութիւնը, այլեւ՝ բացայայտելու համար այս պատերազմին միջազգային տարողութիւնն ու աշխարհաքաղաքական նպատակը, դիմակազերծելով՝ բոլոր մասնակից ուժերը, եւ ստիպելով որ անոնք եւս ուղղակի միջամտեն, քանի որ այլեւս չէին կրնար փոխանորդութեամբ շարունակել Գ. Աշխարհամարտի համագոր այս պատերազմը: Որպէսզի՝ այս պատերազմին ելքը ուրուագծեր միաբեւեռ աշխարհակարգին յաջորդելիք աշխարհակարգին պատկերը:

Այսպիսով վիժած էին ոչ միայն ամերիկեւսիոնական ծրագրերը, այլեւ՝ Էրտողանի Լոր-օսմանական ծրագիրը, որուն դէմ առաջին հարուածը եկած էր Եգիպտոսէն եւ Թունիսէն, ուր Թուրքիոյ դաշնակից Իսլամ Եղբայրներու իշխանութիւնն ու հեղինակութիւնը տապալուեցան. 2013-ին՝ Եգիպտոսի միլիոնական ցոյցերով ու բանակին միջամտութեամբ, եւ 2014-ին՝ Թունիսի ժողովրդային լայիք ուժերուն ու աշխատաւորական հեղինակաւոր համադաշնակցութեան ճնշումին տակ: Երկրորդ հարուածը տուաւ Ռուսաստանի ուղղակի միջամտութիւնը: Երրորդ հարուածը եկաւ ԱՄՆ-էն, որ կանգնեցաւ Քիւրտերու կողքին: Չորրորդ հարուածը եկաւ Թուրքիոյ ներսէն. ոչ միայն Կիւլէնի Աջ (ամերիկեան), այլեւ Ձախ (լայիք ու դեմոկրատական) ընդդիմադիր ուժերու ճակատէն, զոր զսպելու եւ ճնշելու համար, Էրտողան բեմադրեց (2016 թ.) «վիժած յեղաշրջում»ի թատերախաղը... որպէսզի, այդ պատրուակով, հայրենիքի դաւաճան հռչակէ իր տասնեակ հազարներով բոլոր հակառակորդները՝ զինուորականներ, դատաւորներ, լրագրողներ, գրողներ, պետական



պաշտօնատարներ ու հասարակական գործիչներ, եւ բանտարկէ զանոնք, եւ իր միանձնեայ բռնատիրութիւնը հաստատէ երկրին մէջ: Եւ համոզիչ դարձնելու համար իր բեմադրած «յեղաշրջում»ը... Էրտողան ամբաստանեց ՕԹԱՆ-ի պարագլուխը՝ ԱՄՆ-ը, իբր «յեղաշրջում»ի ետին կանգնած միջազգային ուժը... (Այս վերագրումը համոզիչ էր այն պատճառով, որ կարգ մը լրատուական աղբիւրներ խօսած էին թէ՛ ԱՄՆ կը մերժէ Կիւլէնը հեռացնել ԱՄՆ-էն եւ Թուրքիոյ տարյանձնել, որովհետեւ՝ կը ծրագրէ յեղաշրջում մը Էրտողանի դէմ, Կիւլէնի միջոցով):

Էրտողանի նոր-օսմանական ծրագրին հինգերորդ հարուածը եկաւ Իրանէն,– որ այլապէս ալ արդէն թշնամին է փան-թուրքիզմի ծրագրին...–, եւ իր հզօր միջամտութեամբ պաշտպանեց Պաշտպան Ասատի իշխանութիւնը, որ ոչ միայն իր ստրատեգիական զինակիցն է, այլեւ՝ Սուրիոյ վրայով էր որ կրնար զինական ու ֆինանսական մատակարարում կատարել Զըզպալլահին, որ կանգնած էր Իսրայէլի սահմանին վրայ, եւ կը հակակշռէր անոր յարձակողականութիւնը, եւ՝ Պաղեստինի Դատին միակ հաւատարիմ ու գործնական պաշտպանն էր... ամբողջ Արաբ Աշխարհին մէջ, եւ արդէն Իսրայէլ՝ միայն Զըզպալլահի հաշիւը կ'ըներ, որպէս վտանգաւոր ու անմիջական թշնամի, որ իր կողքին ունի Նաեւ Սուրիան եւ Իրանը...:

Մինչեւ վերջերս, Իսրայէլի ղեկավարութիւնը իր պատգամէն կը դիտէր Սուրիոյ դէմ եւ շուրջ մղուող այս միջազգային պատերազմը՝ հանգիստ ու գոհունակ տրամադրութեամբ, եւ միայն ձեռքի տակէ կ'օգնէր ահաբեկչական ջոկատներուն, եւ մերթ ընդ մերթ քարիւղ կը թափէր հրդեհին վրայ, որովհետեւ՝ այս արիւնալի, աւերիչ ու երկարատեւ պատերազմով կը հիւժեմ իրեն սպառնացող թշնամիները, եւ ժամանակ չէին ունենար իր հետ զբաղելու...: Ատենը մէկ՝ ռազմական օդանաւով կը ռմբահարէր Սուրիոյ մէջ կարգ մը թիրախներ, որոնք ըստ իրեն զինամթերք կը փոխադրէին Զըզպալլահին, սակայն ան կ'ուզէր գիտնալ թէ ո՞ր հասած է հիւժումը Նաեւ ռուսական բանակին: Սակայն երբ վերջերս, Սուրիա խորտակեց իսրայէլեան "F16" մը... Նաթանիահու հասկցաւ իրեն ուղղուած ազդարարութեան լրջութիւնը: Ան տազնապահար վազեց ԱՄՆ. հոն Սիոնական Լոպիէն եւ Թրամփէն խնդրելու՝ շարունակումը պատերազմին, քանի դեռ իր թշնամիները չեն հիւժած եւ շնչասպառ չեն եղած, եւ՝ քաղաքական լուծումի մը չեն հասած: (Քաղաքական լուծումին դէմ է Նաթանիահու, քանի որ ինք ենթակայ էր դատական հետապնդումի, որ կը դանդաղի այս պատերազմին պատճառով միայն...): Պատերազմը շարունակելու հարցին շուրջ, Նաթանիահու շատ հեշտօրէն կը ստանայ Սիոնական Լոպիին եւ ռազմական արդիւնաբերութեան ֆինանսատէրներուն ու Փենթակոնի հաւանութիւնը: Դժուարութիւնը՝ Թրամփին հետ է... որուն դիմեց Նաեւ՝ Իսրայէլի գործակից Սեուտ Արաբիան: Թրամփի կեցուածքներուն զիկ-զակները, հակասութիւններն ու խարխափումները՝ հետեւանքն են հակասական ծանր ճնշումներու: Մէկ կողմէ՝ Փոլթինին իր տուած դրական խոստումներուն, եւ միւս կողմէ՝ Փենթակոնի եւ ռազմական արդիւնաբերութեան ֆինանսատէրներու թշնամական արարքներուն՝ իր իշխանութեան դէմ: Ուրեմն, Էրտողան փորձած է Թրամփին բացատրել, թէ՛ Սուրիոյ դէմ պատերազմին շարունակումը կը մեղմացնէ իր թշնամիներուն խաչակրութիւնը իր դէմ: Իսկ Թրամփի վերջին երկու-երեք շաբաթներուն ընթացքին ունեցած կեցուածքները՝ դարձեալ եղան հակասական...:

Մէկ կողմէ՝ ճկուն Թիլըրսընի հեռացումը արագորձնախարարութենէն, եւ միւս կողմէ՝ կոշտ Փոլթընի նշանակումը՝ Ազգային Անվտանգութեան Խորհուրդի նախագահ...: Մէկ կողմէ՝ 600



ռուս դիւանագետներու վտարումը որպէս «լրտեսներ»..., միւս կողմէ՝ Սուրիայէն ամերիկեան զօրքին դուրս քաշումը...:

Անկայուն եւ անհաւասարակչիռ Թրամփի այս հակասական կեցուածքներուն ո՞ր մէկը տակտիկական է եւ ո՞ր մէկը ստրատեգիական. ո՞ր մէկը ժամանակաւոր է, եւ ո՞ր մէկը՝ վերջնական: Այս հարցումին ճիշդ պատասխանը՝ հաւանաբար, մենք կրնանք կռահել, եթէ ուշադրութեամբ քննենք կայուն, հաստատուն եւ հաւասարակչիռ Փուլթինի հակադարձութեան բնոյթը, հասկնալու համար թէ Փուլթինի հակադարձութիւնը՝ միայն համաչափական հակառակն (symmetrical opposite) է, թէ՛ մագլցողական: Եթէ միայն համաչափական հակառակն է, ուրեմն Փուլթին Թրամփի այդ քայլը տակտիկական եւ ժամանակաւոր ու հարկադրական կը նկատէ եւ չի ժխտեր Թրամփի տուած դրական խոստումները: Իսկ եթէ Փուլթինի հակադարձութիւնը մագլցողական է, կը նշակաւ, թէ՛ Փուլթին Թրամփի այդ քայլը կը նկատէ ստրատեգիական ու վերջնական, խախտում խոստումին:

Արդ, Փուլթին՝ 600 ռուս դիւանագետներու վտարումին եւ ռուսական աւագ հիւպատոսարանի փակումին պատասխանեց միայն՝ համաչափական հակառակով, յիշելով թէ՛ այս քայլը պարզապէս համաչափական հակառակն է Թրամփի քայլին: Այսինքն՝ Tit-for-Tat... բայց դուռը բաց է՝ մեր երկու երկիրներու խաղաղ համագործակցութեան, վասն համաշխարհային խաղաղութեան...: (Ի դէպ՝ Փուլթին Նոյն կերպ պատասխանեց Նաեւ Եւրոպայի այն պետութիւններուն, որոնք կապկած էին ԱՄՆ-ի եւ Բրիտանիոյ առած դիւնագիտական քայլերը...): Եւ՛ յանկարծ, Թրամփի՝ անսպասելիօրէն յայտարարեց թէ՛ շատ մօտ օրին ԱՄՆ իր զօրքը պիտի դուրս քաշէ Սուրիայէն...: Այսինքն, ԱՄՆ պատրաստ է՝ վերջ տալու Սուրիոյ դէմ իր մղած մօտ ութնամեայ պատերազմին՝ քաղաքական խաղաղ երկխօսութեամբ համաձայնելով Ռուսաստանի հետ, հաւասարակշռուած լուծումի մը շուրջ...: Ինչ որ Թրամփի գաղտնի խոստումն էր Փուլթինին, ԱՄՆ-ի նախագահական ընտրութեան նախօրէին:

Ամէն պարագային, ինչ որ ալ ըլլան յառաջիկայ զարգացումները՝ խաղաղասիրական թէ մագլցողական, մէկ բան յստակ է, որ ամերիկեւսիոնական իմփերիալիզմին Սուրիոյ դէմ մղած Գ. Աշխարհամարտին համագոր միջազգային պատերազմին արդիւնքն է որ պիտի ուրուագծէ միաբեւեռ աշխարհակարգին յաջորդելիք Նոր՝ երկբեւեռ (ԱՄՆ-Ռուսաստան), եռաբեւեռ (ԱՄՆ-Ռուսաստան-Չինաստան), թէ՛ բազմաբեւեռ (ԱՄՆ-BRICS), քանի որ այս պատերազմը՝ Սուրիոյ «քաղաքացիական ներքին պատերազմը չէր», առաջին իսկ օրէն: Այս պատերազմը՝ իր վերջալոյսը ապրող ամերիկեան միաբեւեռ աշխարհակարգը վերակենդանացնելու անհեռանկար փորձ մըն էր, որ ԱՄՆ-ին պիտի տար երկրորդ առիթ (այլ՝ վերջին) մը (Սովետ Միութեան ինքնալուծարումը ըլլալով առաջին առիթը) իր աշխարհակալութեան պահպանումին համար, զոր տասնամեակ մը առաջ՝ Չպիկնիւ Պրժեժինսքին, իր լոյս ընծայած "Second Chance?" գիրքով՝ անհաւանական եւ անկարելի կը գտներ...:

Պէյրուք

31 Մարտ 2018

Տեսակէտ

Գաղափարական Անկիւն

ԵԶՐԻ ՄԸ ՏԱՐՈՒ Է ԿԱՐԵՒՈՐ ԹԷ՞ ՅԱՏՈՒԿ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵԹՐ Գ. ՏԷՐՏԷՐԵԱՆ



Գաղափարական դպրոցները՝ ընդհանրապէս, կը բաժնուին երկու խումբերու. ամբողջական-յարակցական, ներքին միասնութիւն ունեցող (coherent), կամ՝ կիսատ-պռատ-հաւաքաբանական, ներքին միասնութիւն չունեցող, ոչ զուտ (incoherent, eclectic):

«ԱԶԴԱԿ» օրաթերթի Ուրբաթ, 19 Յունուար 2018 թուակիր համարին մէջ, Նաթան Պետրոսեանի ստորագրած գրութիւնը՝ «Դաշնակցութեան Կամըը Կենդանի Է Յաւիտեան» խորագրով, կը խօսի գաղափարական էկլէկտիկ դպրոցի մը եւ Ռոստոմի (Ստեփան Զօրեան) մարքսական ու սոցիալիստական գաղափարականին մասին, բնագանցական, գիտագանցական մտածելակերպով (ոչ՝ տրամախոհական, դիալէկտիկական) եւ՝ կրօնական պաշտամունքի ոճով ու շունչով (ոչ՝ քաղաքա-տնտեսա-հասարակագիտական տրամաբանութեամբ ու մեթօտաբանութեամբ), զորս կ'ուզենք

մատնանշել եւ իր ուշադրութեան յանձնել ներկայ անդրադարձով:

Որպէս նախնական զգուշացում, հարկ է յստակօրէն ճշդել թէ՛ որոնք են պաշտամունքին բացասական պարտադրանքները, եւ սոցիալիզմին կառոյցային հիմնական նախապայմանները:

Ամէն պաշտամունք կ'ենթադրէ անառարկելի հեղինակութիւն եւ անոր՝ կոյր հնազանդութիւն եւ ստրկութիւն. ինչ որ ներհակ է ազատութեան, իրաւահաւասարութեան ու եղբայրակցութեան սկզբունքներուն: Եւ հետեւաբար՝ մարդկայնական չէ, եւ՝ հակաբարոյական է ու ներհակ՝ քաղաքատնտեսագիտութեան ու գիտական մտածելակերպին:

Եւ սոցիալիզմի կառոյցային նախապայմաններն են՝ արտադրութեան միջոցներու համայնական սեփականութիւնը, արգիլելու համար՝ դասակարգային շահագործումին կարելիութիւնը, եւ արտադրութեան արդիւնքին արդար բաշխումը, վերջ դնելու համար «յաւելեալ արժէք»ի (surplus value) անարդար միջոցին. եւ հետեւաբար՝ դասակարգային պայքարի անհրաժեշտութեան, հասարակութեան երկբեւեռացումին ու երկփեղկումին: Այլ խօսքով. սոցիալիզմի հաստատումին նպատակն է դրամատիրութեան արմատական վերացումը... արմատախլումը:

Նաեւ՝ հարկ է յստակօրէն ճշդել, բազմաչարչար վերացական ժողովրդավարութիւն (դեմոկրատիա) եզրին բովանդակութիւնը այսօր, որպէսզի յստականայ այս եզրին ալ ինքնուրոյն բովանդակութիւնը: Քանի որ, այս եզրը այսօր ունի այլազան բովանդակութիւններ. դրամատիրական, սոցիալիստական ու ժողովրդային: Արեւմուտքի մէջ, բուրժուական բովանդակութիւն, Սովետ Միութեան եւ Ժողովրդային Չինաստանի մէջ՝ սոցիալիստական, եւ Արեւելեան Եւրոպայի մէջ ունէր՝ ժողովրդային բովանդակութիւն: Նոյնիսկ, սոցիալիզմ եզրը այսօր կը գործածուի այլազան բովանդակութիւններու համար. Բ. Միջազգայնի յատուկ («բարի» կամ «կիրթ» դրամատիրական), Գ. Միջազգայնի յատուկ (սոցիալիստական եւ նացիոնալ-սոցիալիզմի յատուկ (ցեղապաշտական), Եւայլն...: Իսկ սոցիալ-դեմոկրատիան (ընկերվար-ժողովրդավարութիւն) արդէն պարպուած է իր սոցիալիստական բովանդակութենէն, հրաժարած ըլլալով՝ սոցիալիզմի կառուցումէն,



արտադրութեան միջոցներու համայնական սեփականութենէն, եւ դասակարգերու վերացումէն, գոհանալով միայն՝ աշխատաւորներու ընկերային ապահովութեան մասնակի գոհացումով. այսինքն՝ սենտիքալիզմով, որ արդէն գոյութիւն ունի «կիրթ» դրամատիրութեան մէջ, զատորոշուելով «վայրի» դրամատիրութենէն, ուրեմն եւ՝ պահպանելով դրամատիրական հասարակարգը...: Այլ խօսքով՝ հրաժարած է սոցիալիստական յեղափոխութենէն, առանց որուն կարելի չէ վերացնել (արմատախիլ ընել) դրամատիրական հասարակարգը, եւ հաստատել՝ սոցիալիստական հասարակարգ, որովհետեւ՝ դրամատեր դասակարգը կարելի չէ յօժարակամ հրաժարեցնել՝ պառլամենտական ճամբով: Եւ Լատին Ամերիկայի փորձը ցոյց տուաւ, որ միայն Քուլան է որ կրցաւ հաստատել սոցիալիստական կայուն հասարակարգ՝ շնորհիւ զինեալ յեղափոխութեան, իսկ միւս սոցիալիստամետ շարժումները, որոնք փորձեցին խորհրդարանական ընտրութիւններու ճամբով հասնիլ իշխանութեան, ցարդ չյաջողեցան հաստատել սոցիալիստական կայուն հասարակարգ, քանի որ իրենց ներքին դրամատեր դասակարգը վերածուեցաւ ամերիկեան իմփերիալիզմի «հինգերորդ զօրասիւն»ը երկրին մէջ, որ կը խափանէ սոցիալիզմի հասնելու ճամբան:

•••

Արդ, տեսնենք թէ ինչ գրած է Նաթան Պետրոսեան իր վերոնշեալ գրութեան մէջ: Գրութեան խորագիրը՝ «Դաշնակցութեան Կամբը Կենդանի Է Յաւիտեան», արդէն բնագանցական է: Բնական, իրական աշխարհին մէջ գոյութիւն չունին յաւիտեանական բաներ: Այս աշխարհին ու երկրին մէջ, ամէն իրական բան, ոչ՝ երեւակայական կամ դիցաբանական, ոչ անսկիզբ է, եւ ոչ ալ՝ անվախճան: Այլ՝ սահմանափակուած է ժամանակի մը եւ տարածութեան մը մէջ: Կը ծնի, կը զարգանայ, եւ հուսկ՝ անխուսափելիօրէն կը մահանայ, կամ կը փոխակերպուի ուրիշ բանի. նոյնը չի մնար՝ յաւիտեան: Եւ արդէն քիչ անդին պիտի տեսնենք, որ նոյնինքն Ն. Պետրոսեան կը խօսի Դաշնակցութեան «կամք»ին փոփոխուելուն՝ նոյնը չմնալուն մասին: Ասիկա տիեզերական ճշմարտութիւն մըն է, եւ այս խորագիրը գիտազանցական է ուրեմն:

Այս գրութիւնը ունի ոչ վճիտ, խճճուած ոճ, կոյր պաշտամունքի շունչ եւ խառնիճադանճ դասաւորում: Եւ, կը պարզուի, որ հեղինակը մերթ ընդ մերթ իր կատարած ճիշդ բնութագրումներուն կողքին, անգիտակ է իր գործածած բառերուն եւ որակումներուն գիտական նշանակութեանց եւ իւրայատուկ բովանդակութեան, անուշադիր է պատմական որոշ անցքերու բովանդակութեան աւելի ուշ տեղի ունեցած գլխիվայր շրջումին նկատմամբ, եւ՝ իրարմէ անզանազանելի ձգած է՝ Ռոստոմի եւ ԶՅԴ-ի Ծրագրի վերջին մէկ դարու ընթացքին կրած գաղափարական փոփոխութիւնները, Ռոստոմի մահէն վերջ: Մինչդեռ այսօր՝ միայն վերջին քառորդ դարու ընթացքին (1993-2018), գործնական գետնի վրայ եղած են որոշ փոփոխութիւններ ԶՅԴ-ի Ծրագրին: Օրինակի համար միայն, այն հարցը թէ՛ ԶՅԴ այսօր «յեղափոխական ընկերվարակա՞ն» է, թէ՞ «պառլամենտական»... Այսինքն՝ յեղափոխական ու սոցիալիստական է թէ՛ ոչ:

«ԴՐՕՇԱԿ»ի 15-28 Յունիս 1993 թուակիր համարին մէջ, «Դաշնակցական Բեմ» սիւնակի տակ եւ «Արեւելումի Խնդիրներ՝ ՈՐՏԵ՞Ղ ԵՆՔ ՄԵՆՔ» խորագրով իր գրութեամբ, Էդիկ Յովհաննիսեան էջ 19-ի վրայ կատարած է հետեւեալ հաստատումները.

«ԶՅ Դաշնակցութիւնը ծնուել է ու մնում է յեղափոխական ընկերվարական կուսակցութիւն, որը ունի իր ուրոյն քաղաքական նպատակները, պայքարի ձեւերը եւ հասարակական արդարութեան ըմբռնումները: Որքան էլ որ ուզեն ոմանք՝ դարձնել մեզ սովորական պառլամենտական կուսակցութիւն, այդ բանը կամ չի յաջողուի եւ կամ էլ՝ մահացու հարուած կը հասցնի մեզ: Էլ չիօսենք այն մասին, որ մեր կուսակցութեան «պառլամենտականացումը» մեծ կորուստ կարող է լինել հայ ժողովրդի համար (Այսօր ԶՅԴ-ի պառլամենտականացումը կատարուած փաստ է, իր բոլոր բացասական հետեւանքներով՝ ոչ միայն Հայաստանի վրայ, այլեւ՝ իր իսկ վրայ...):

«Հայաստանի ղեկավարների թուլութիւնը կայանում է նրանով, որ նրանք չեն ներկայացնում ոչ մէկ գաղափարախօսութիւն ու կազմակերպութիւն եւ նրանց յետեւում կանգնած չէ ոչ մէկ ուժ: Հաւանաբար բացառութիւն կարելի էր համարել կոմունիստներին, որոնք հենց այն



պատճառով էլ թուլացան, որ թուլացաւ նրանց մէջքին կանգնած կոմունիստական կուսակցութիւնը: Այժմ մեզ ուզում են զգել նրանց օրը այն ղեկավարները, որոնք գործում են ուրիշների, բայց Հայաստանից դուրս գտնուող ուժերի թելադրանքով: Դրա համար էլ երկրի նախագահը՝ Երբեմն-Երբեմն, մեր շարքերից դուրս է քաշում անկայուն, փառամոլ, իսկ յաճախ ուղղակի դաւաճանների, շրջապատում նրանցով, ապա յայտարարում, թէ իր շրջապատումն էլ կան դաշնակցականներ, բայց նրանք, ի տարբերութիւն ՀՀԴ ղեկավարութեան՝ լաւ դաշնակցականներն են: Ո՛չ, նրանք դաշնակցականներ չեն, որովհետեւ նրանց մէջքին այլեւս Դաշնակցութիւն կանգնած չկայ եւ նրանց ընտրութիւնը կատարուել է ոչ թէ Դաշնակցութեան, այլ՝ հակա-դաշնակցական կողմից (Եթէ Լեւոն Տէր Պետրոսեանի օրով անհատ դաշնակցականներ կը գործակցէին նախագահին հետ, Սերժ Սարգսեանի օրով՝ կուսակցութիւնն է, որ կը գործակցի անոր հետ...):

«Երբ ամբողջ աշխարհը հակախորհրդային քաղաքական դիրքորոշումից ելնելով՝ ոտնահարում ու դատապարտում էր ընկերվարութիւնը, մենք չվախեցանք այդ արշաւից ու քաղաքականօրէն հակադրուելով հանդերձ խորհրդային վարչակարգին, մէկ թիզ չփոխեցինք մեր գաղափարախօսութիւնից: Բայց այսօր, մենք համոզուեցինք, որ ճիշդ էինք, որ հասարակական արդարութեան անհրաժեշտութիւնը ի վերջոյ տանելու է մարդկութիւնը դէպի ընկերվարական սկզբունքներով կառուցուած վարչակարգեր: Մենք տեսնում ենք, որ բոլոր այն դրամատիրական երկիրները, այդ թւում նաեւ Միացեալ Նահանգները, որտեղ ընկերվարութեան սկզբունքները միայն մասամբ են կիրառուած, կանգնած են մեծ ճգնաժամերի առջեւ, քանի որ այդ երկրներում գոյութիւն ունեցող տարբերութիւնը՝ հարուստի եւ աղքատի միջեւ, պարզապէս կործանիչ է երկրի համար»:

Ուրեմն. սոցիալիզմի սկզբունքներուն մասնակի կիրառումը կործանիչ է երկրին համար: Գ. Հանրապետութեան օլիգարխիական համակարգը՝ նոյնիսկ այդ մասնակի կիրառումը կ'ընէ՝ արդեօք:

Քառորդ դար անց, այս գրութեան պաշտպանած սկզբունքային կեցուածքէն, երբ այսօր՝ ՀՀԴ ղեկավարութիւնը կոալիցիա կազմած է Հայաստանի օլիգարխիական, վայրի դրամատիրական համակարգին հետ, եւ ուրեմն դարձած է՝ պառլամենտական եւ ոչ-յեղափոխական ընկերվարական, պատրանքը ունենալով, որ նախագահականէն պառլամենտական նոր դրութեան հաստատումով պիտի կարենայ փոխել համակարգը: Կարելի՞ է ըսել թէ՛ մնացած է նոյնը, ինչ որ էր 1993-ին...: Այս մասին, Կարօ Արմենեան գրած է ճիշդ եւ դիպուկ դիտարկում մը, «Ազդակ»ի 12 Ապրիլ 2018 թուակիր համարին մէջ, «Գործող Յարացոյցը Եւ Մենք» խորագրին տակ, ըսելու համար որ տիրող համակարգին բարեփոխումը պառլամենտական դրութեան որդեգրումով՝ պատրանք մըն է: Ան կը մատնանշէ հետեւեալները.

«Նախ եւ առաջ մենք մեզի հարց տանք թէ ինչ է բնոյթը այսօր, երկրի քաղաքական կեանքը տնօրինող յարացոյցին (paradigm) եւ այդ լոյսին տակ միայն փորձենք գնահատական տալ կառավարական դաշինքէն ներս մեր կուսակցութեան ներկայ դերակատարութեան եւ ապագայ անելիքին:

«Ներկայի յարացոյցը կը շարունակէ մնալ այն ինչ որ էր:

«Այս յարացոյցի դարբինները աւելին չեն կրնար տալ մեր երկրին: Անոնք կը հաւատան այն մաքիավելական օրէնքին, որ կ'ըսէ թէ՛ «իրականութիւնը պետք է փոխուի, որպէսզի ան մնայ նոյնը»: Հետեւաբար, իրենցմէ ծնող արդիականացումը պիտի չըլլայ խորքային: Ան հիմնական լուծում պիտի չբերէ արտագաղթի հարցին: Ան պիտի չըլլայ համակարգային: Ան պիտի չազատագրէ տնտեսութիւնը մենաշնորհային համակարգի տիրապետութենէն, եւ այլն...»:

Արդարեւ, Կարօ Արմենեանի մտածելակերպը բնագանցական չէ, այլ՝ տրամախոհական:

ՀՀԴ-ի այսպիսի արմատական փոփոխութիւնը Նաթան Պետրոսեան չէր կարենար տեսնել՝ իր բնագանցական ու պատմագանցական մտածելաեղանակին պարտադրած քարացած դիրքին պատճառով:

Նոյն քարացած դիրքով, ան գրած է.

«Գիտակցելով հայերու եւ այլազգիներու միջեւ գոյութիւն ունեցող նմանօրինակ շահերը՝ Ռոստոմը անձնապէս ստանձնեց երեք պետութիւններու մէջ գտնուող ամենէն



յառաջդիմական ուժերուն հետ յարաբերութիւններու հաստատման դերը: Հետագային այդ յարաբերութիւնները զարգացան եւ ՀՅԴ դարձաւ գլխաւոր մասնակից ռուսական (1905), պարսկական սահմանադրական (1905) եւ օսմանական (1908) յեղափոխութիւններուն, ինչպէս նաեւ մակեդոնական ազգային ազատագրական շարժման:

«Յեղափոխութիւնները կը միտէին ստեղծել ժողովրդավարական, աշխարհիկ, ընկերային-տնտեսական արդար կարգերով օժտուած եւ բոլոր քաղաքացիներուն իրաւունքներն ու ազատութիւնները յարգող համակարգ մը»:

Մէկդի թողլով «գլխաւոր մասնակից»ի անհեթեթ մեծխօսիկութիւնը, հարց կու տանք. 1908 թուի սիոնափանթօնըք երիտթուրքերու զինուորական պետական հարուածը, այսօր՝ 2018-ին եւս, կարելի՞ է «յեղափոխութիւն» անուանել զայն գործադրող Իթթիհատ վէ Թերաքըը կուսակցութիւնը՝ Օսմանեան Կայսրութեան «ամենէն յառաջդիմական ուժը» համարել եւ անոր վերագրել միտումը ստեղծելու՝ «ժողովրդավարական, աշխարհիկ, ընկերային-տնտեսական արդար կարգերով օժտուած եւ բոլոր քաղաքացիներուն իրաւունքներն ու ազատութիւնները յարգող համակարգ մը...»:

Եթէ ՀՅԴ ղեկավարութիւնը՝ 1908 թուին խաբուած էր եւ սխալած, չէր գիտցած Երիտթուրքերու սիոնափանթօնըք ծաւալողական ծրագիրը, որուն առաջին քայլն էր՝ դէպի Պաքու ճամբան խոչընդոտող երկու Հայաստաններուն վերացումն ու չբացումը..., 1909 թուի Ատանայի ջարդէ՞րն (30,000 հայ) ալ բաւարար չէին՝ զգաստանալու եւ սթափելու: Իսկ այսօր՝ Մեծ Եղեռնի Հայաստանութենէն ու բռնի Տեղահանութենէն 103 տարիներ վերջ, երբ Նաթան Պետրոսեան կը շարունակէ անգիտանալ՝ այս ահաւոր Ոճիրը հայ ժողովուրդի գոյութեան դէմ, ի՞նչ բացատրութիւն, չքմեղանք կամ արդարացում կրնայ հնարել արդեօք...: Եթէ Ռոստոմ այսօր ողջ մնացած ըլլար, անոր վճիռը՝ Ն. Պետրոսեանի գործած այս քստմնելի ուրացումին սրբապղծութեան համար՝ ի՞նչ պիտի ըլլար (Սիոնափանթօնըք ծրագրի մասին տես՝ Մեթր Գ. Տերտերեան, «Սիոնիզմի եւ Փանթուրքիզմի Առնչութիւնները եւ Անոնց Սպառնալիքը Հայաստանի Լինելութեան», Պէյրութ, 1990, Մատենաշար Լիբանանահայ Գրական Շրջանակի):

Ն. Պետրոսեան ճիշդ կ'ըմբռնէ Ռոստոմի «Այբուբեն» գրութեան մարքսական թեզը, թէ՛ ազգային ազատագրութիւնը եւ ընկերային-տնտեսական ազատագրութիւնը տարբեր չեն իրարմէ, այլ՝ զիրար կ'ամբողջացնեն, եւ զիրար կը զօրացնեն, զիրար կը պայմանաւորեն: Նաեւ կ'ըսէ, թէ Ռոստոմի գաղափարախօսութիւնը կենդանի մնացած է ՀՅԴ-ի մէջ եւ անոր կամքը կը ներկայացնէ, որ կենդանի է յաւիտեան... Միաժամանակ կ'աւելցնէ, որ Ռոստոմի գաղափարախօսութիւնը ոչ զուտ մարքսական է, ոչ ալ զուտ նարոտնիկական, եւ՝ աւելի մարքսական է քան՝ նարոտնիկական: Ուրեմն, կ'ընդունի թէ՛ ՀՅԴ գաղափարախօսութիւնը զուտ չէ. այսինքն՝ Էկլեկտիկ է, հաւաքաբանական է: Բայց, իր գրութեան եզրակացութեան մէջ կը գրէ հետեւեալ հակագիտական, հակահասարակագիտական տողերը.

«[ՀՅԴ] սկսաւ ուղղափառ մարքսականութեամբ եւ զարգացաւ մարքսականութեան վերատեսութեամբ, ապա՝ ամբողջութեամբ հրաժարեցաւ մարքսականութենէն: Այսօր ծաւալող գաղափարական հոսանքը՝ արմատական ձախը կամ ժողովրդավարական ընկերավարութիւնն է...»:

Եւ՝ վերջին տողին մէջ, ան կը պնդէ.

«Եթէ այսօր Ռոստոմը ողջ ըլլար, պիտի որդեգրէր արմատական ձախի ուղին...»:

Այս գաղափարական խառնիճաղանճը եւ վերջին գուշակութիւնը ոչ մէկ կապ ունին հասարակագիտութեան հետ՝ ոչ բառապաշարի եւ ոչ ալ բովանդակութեան տեսանկիւնէն, այլ՝ առկայ անփառունակ վիճակ մը արդարացնելու անյոյս փորձ մը միայն:

Մարքսիզմը գիտական ուսմունք է, որ հիմքն է գիտական աշխարհայեացքի մը, որ պատմական եւ դիալեկտիկական մատերիալիզմն է, եւ քաղաքատնտեսագիտութեան մը, որ գիտական սոցիալիզմն է: Մարքսական եւ գիտական սոցիալիզմը որդեգրած կուսակցութիւնը միաժամանակ յեղափոխական կ'ըլլայ, որովհետեւ՝ դրամատիրական երկարամեայ, արմատակալած հասարակարգին արմատախլումը եւ անոր տեղ սոցիալիստական հասարակարգին կառուցումը, չի կրնար իրագործուիլ՝ առանց յեղափոխութեան, խորհրդարանական ընտրութեանց ճամբով...:



«Մարքսիզմի վերատեսուփին» կոչուածը՝ ռեվիզիոնիզմը, զարգացում չէ, այլ՝ հեռացում անկէ, հեռացում՝ անոր աշխարհայեացքէն եւ քաղաքատնտեսագիտութենէն եւ յեղափոխականութենէն: Այլ խօսքով՝ յառաջընթաց ու յեղափոխ քայլ մը չէ, այլ՝ յետընթաց եւ պահպանողական քայլ:

Իսկ «արմատական ճախ» կոչուածը, կամ «ժողովրդավարական ընկերվարութիւն» (իմա՝ սոցիալ-դեմոկրատ), ոչ ճախ է եւ ոչ ալ ընկերվար: Որովհետեւ Մարքսիզմէն հրաժարողը աջ է եւ դրամատիրական:

Եւրոպայի բոլոր սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւններէն եւ ոչ մէկը՝ երբ երկրի մը մէջ իշխանութեան հասաւ, հոն չհաստատեց սոցիալիստական հասարակարգ... քանի որ հրաժարած էր մարքսական քաղաքատնտեսագիտութենէն, քաղաքական սոցիալիզմէն, եւ՝ դարձած պառլամենտական կուսակցութիւն, եւ որդեգրած էր ներ-դրամատիրական իշխանութեան հերթափոխութիւն. ինչպէս կը հերթափոխուին ԱՄՆ-ի մէջ՝ Զանրապետական եւ Դեմոկրատական կուսակցութիւնները, Բրիտանիոյ մէջ՝ Պահպանողականն ու Աշխատաւորականը, եւ Լիբանանի մէջ ալ՝ «14 Մարտ»ը եւ «8 Մարտ»ը, եւայլն: Լաւագոյն պարագային, սոցիալ-դեմոկրատը կը կիրարկէ «կիրթ» կամ «բարի» դրամատիրութիւն, զատորոշուելով «վայրի» կամ «չար» դրամատիրականէն:

Եւ՝ Ն. Պետրոսեանի կողմէ իր գրութեան մէջ Ռոստոմէն կատարած մեջբերումները բնա՛ւ չեն ենթադրեր, որ ան այսօր պիտի որդեգրեր սոցիալ-դեմոկրատականը, եւ Պետրոսեանի գուշակութիւնը ոչ միայն ճիշդ է, այլեւ՝ վիրաւորական...: Ան՝ երբ իր գրութեան առաջին նախադասութեան մէջ խոստովանած է թէ՛ «Շատ դժուար է խօսիլ կամ գրել այնպիսի հսկայի մը մասին, որուն ժամանակաշրջանին չենք ապրած, իրեն հետ չենք եղած, սակայն տեսած ենք իր գործին Եւրփիւնը, որ կ'ապրի մինչեւ օրս...», ինչպէ՛ս կրնայ գուշակութիւն ընել, որ Ռոստոմի Եւրփիւնը (գաղափարախօսական) դեռեւս կ'ապրի մինչեւ օրս, եւ այդ Եւրփիւնը սոցիալ-դեմոկրատիան է, որ հրաժարած է մարքսիզմէն եւ գիտական սոցիալիզմէն, եւ որդեգրած «կիրթ» դրամատիրութիւնն ու պառլամենտական ուղին, եւ դարձած՝ ոչ-յեղափոխական...: Մինչդեռ Ռոստոմ՝ հետեւողական մարքսական էր, ընկերվարական եւ յեղափոխական. հիմնովին տարբեր, պատեհապաշտ, ամեն հովէ տատանող, «այսօրուան ծաւալող գաղափարական հոսանքին հետեւող» պոլիտիկոս ղեկավարներէն: Ն. Պետրոսեան չի՞ գիտեր, որ Ռոստոմ աննկուն, «անուղղայ» յեղափոխականն էր, որ 1918 թուին կը ղեկավարեր իր դաշնակցական մարտական ընկերներուն կռիւը՝ Պաքուի Կոմունայի յեղափոխականներուն կողքին, ընդդէմ՝ թաթարական մուսաւաթական (թուրքերու «Տին, Գան, Տիլ Վէ Սիասէթ Գարտաշ»ներուն) ու բրիտանական գաղութարար ուժերուն դէմ, պաշտպանելով Պաքուի հայութիւնն ու յեղափոխութիւնը: Եւ երբ 1918 թ. Յունիսին, թուրքերը պարտադրեցին Պաթումի ստրկական դաշնագիրը, պահանջելով՝ օրուան դաշնակցական ղեկավարներէն, զինաթափել՝ դաշնակցական զինեալները, եւ Պաքուէն դուրս քաշել՝ Ռոստոմի ղեկավարած դաշնակցական մարտիկները, եւ սակայն Ռոստոմ չհնազանդեցաւ ոչ-յեղափոխական ղեկավարներու հրահանգին, եւ մինչեւ 1918 թ. Սեպտեմբեր 14 շարունակեց կռիւը, պաշտպանելով Պաքուի հայութիւնն ու Կոմունան, որովհետեւ՝ կարելի չէր պաշտպանել հայութիւնը առանց պաշտպանելու կոմունան, որ կը պաշտպաներ նաեւ՝ հայութիւնը, փանթուրքիզմի ծրագրին դէմ, եւ մնաց Պաքու՝ մինչեւ Կոմունայի անկումը, 1918 թուի Սեպտեմբեր 19:

Բնագանցական, վերացական եւ բովանդակազուրկ եզրերով, Ն. Պետրոսեան կը խօսի «Ռոստոմի ազատամետ մտածելակերպի հանճար»ին մասին, կարծելով թէ՛ այսպիսով կը փառաբանէ Ռոստոմը, որ փառքի մուրացկան մը չէր, այլ՝ ազատագրական պայքարի յանձնառու յեղափոխական մը:

Ն. Պետրոսեանի բնագանցական ու շահադիտական մտածելակերպին արդիւնքն է՝ ոչ միայն «օրուան ծաւալող գաղափարական հոսանք»ին հետեւելու պատեհապաշտութեան զովասանքը, այլեւ հետեւեալը. «ՅՅԴ Դ. Ընդհանուր ժողովին ընթացքին որդեգրուած վերամշակուած ծրագրին մէջ, պաշտօնապէս կատարուեցաւ «ընկերվարութիւն» բառին ներառումը, որուն մէջ դեր ունեցաւ նաեւ Ռոստոմ: «Ընկերվարութիւն» բառի որդեգրումը՝



Դաշնակցութեան առջեւ նոր հորիզոններ բացաւ...»: Երկու անգամին ալ՝ մեջբերումի ձեւին մէջ դրուած ընկերվարութիւն բառին (ոչ՝ ընկերվարութեան) ներառումին «պաշտօնապէս» կատարուած ըլլալուն շեշտումը (ծիսակատարում յիշեցնող) ունի պաշտամունքային բնոյթ, որ ընկերվարութեան յարում կամ որդեգրում չի նշանակեր, այլ միայն այդ բառին հանդէպ կոյր հաւատքի, ոչ-գիտակցուած համոզում: Իսկ բառին որդեգրումին իբր հետեւանք, «նոր հորիզոններ բացուած» են ոչ թէ հայ ժողովուրդին, այլ՝ Դաշնակցութեան առջեւ: Մինչդեռ ընկերվարութիւնը ժողովուրդին ծառայող հասարակարգ է, ոչ թէ կուսակցութիւններու: Մեջբերուած հատուածին առաջին նախադասութիւնը բնագանցական է ու պաշտամունքային, իսկ երկրորդ նախադասութիւնը՝ շահադիտական ու ինքնանպատակային:

Բնագանցական մտածելակերպը բառի մը տառը լոկ նկատի կ'ունենայ, անտեսելով ատոր իւրայատուկ բովանդակութիւնը: Իսկ քաղաքագիտՈՒԹԻՒՆԸ, որ ունի տրամախոհական (դիալեկտիկ) մտածելակերպ, նկատի կ'ունենայ բառին իւրայատուկ բովանդակութիւնը, իր տրամախոհական մտածելակերպին շնորհիւ: Օրինակ. քաղաքագիտութեան մէջ, ամէն աշխարհակալութիւն՝ անպայմանօրէն չի նշանակեր կայսերապաշտութիւն կամ իմփերիալիզմ, որովհետեւ այս երկուքը ունին իրարմէ տարբեր իւրայատուկ բովանդակութիւններ:

Կայսերապաշտութիւնը կը պատկանի միապետական աւատատիրութեան դարաշրջանին, իր ունեցած իւրայատուկ բովանդակութեան համար:

Գաղթատիրութիւնը կը պատկանի դրամատիրութեան վերելքի դարաշրջանին:

Իսկ իմփերիալիզմը կը պատկանի դրամատիրութեան զարգացման վերին փուլի դարաշրջանին, որ կը կոչուի նաեւ՝ նոր-գաղթատիրութիւն, իր իւրայատուկ բովանդակութեան համար:

Ուրեմն. հայերէնի մէջ, սխալ է, ճշգրիտ չէ՝ իմփերիալիզմ բառին փոխարէն գործածել կայսերապաշտութիւն բառը: Իսկ ո՞րն է իմփերիալիզմի իւրայատուկ բովանդակութիւնը: Ատիկա ունի հետեւեալ յատկանիշերը.

- 1) Իր զարգացման բարձրագոյն փուլին հասած դրամատիրութիւնն է:
 - 2) Որ կ'արտածէ իր արտադրութեանց հետ միասին, նաեւ՝ արդիւնաբերական դրամագլուխներ:
 - 3) Իր արդիւնաբերական ու ֆինանսական դրամագլուխները կը սերտածին, կը համարկուին երկրի կեդրոնական եւ միւս բոլոր դրամատուներուն հետ:
 - 4) Իրեն մրցակից իմփերիալիստական տերութիւններուն հետ կը ջանան աշխարհը բաժանել իրենց միջեւ, եւ ապա՝ վերաբաժանել, պատերազմներով, իրար ջարդելով եւ հպատակ ժողովուրդներ ալ ջարդելով եւ երկիրներ քանդելով ու ակերելով, նոր-գաղութատիրութիւն կիրարկելով:
 - 5) Սկզբնական վերելքի շրջանի ազատ մրցակցութեան (Laissez Fair, Laissez-Alier) սկզբունքէն հրաժարելով, հաստատած կ'ըլլայ մենաշնորհական (monopolist) դրամատիրութիւն՝ Թրասթներու (Trust) միջոցով:
 - 6) Չինու ուժով եւ սուտ պատճառաբանութիւններով կը նախայարձակի գերիշխան պետութիւններու վրայ, զանոնք գրաւելով եւ անոնց մէջ իշխանութիւնը յանձնելով իր դրածոներուն, եւ հաստատելով իր ռազմախարհիսները (օրինակ. ամերիկեան իմփերիալիզմի կատարած նախայարձակումները՝ Աֆղանիստանի, չքնաղ Եուկոսլաւիոյ, Իրաքի, Լիպիոյ, Սուրիոյ, Եմենի եւ Լիբանանի վրայ: Այս վերջին երեք պետութիւններուն պարագային, սկիզբը՝ ոչ ուղղակիօրէն, այլ վարձկան եւ իրեն ծառայող ուժերու փոխանորդութեամբը՝ Թուրքիոյ, Իսրայելի, Սեւտ Արաբիոյ եւ իրեն լծակից միւս իմփերիալիստ տերութիւններուն: Սակայն ի վերջոյ՝ ուղղակիօրէն, երբ Ռուսաստան զինեալ միջամտութեամբ պաշտպան կանգնեցաւ իր զինակիցին՝ Սուրիոյ պահանջով):
- Յոգեկան խախտում կամ ախտ մը կայ, զոր ունեցողը՝ իր մտադրութիւնը անպայմանօրէն նոյնութեամբ դիմացինը ունի կը կարծէ...: Ամերիկեակոնական իմփերիալիստները եւ անոնց բազմազգի մանկաւիկները, յղիացած՝ լոկ իմփերիալիստական մտադրութիւններով, Ռուսաստանի այս միջամտութիւնը եւս իրենցինին նման իմփերիալիստական հռչակեցին, եւ՝ բնագանցական մտածելակերպ ունեցող մարդիկ հաւատացին:



Սակայն, տրամախոհական (դիալեկտիկ) մտածելակերպ ունեցողները ուզեցին ստուգել ռուսական միջամտութեան իւրայատուկ բովանդակութիւնը, որոշելու համար անոր բնոյթը, իմպերիալիստական է թէ ոչ: Եւ գտան.

1) Որ այս միջամտութիւնը պահանջած է՝ Ռուսաստանի զինակից Սուրիան: Ուրեմն՝ օգնութիւն է, ոչ գրաւում:

2) Որ Ռուսաստան նաեւ Սուրիոյ մէջ իր ունեցած արտօնեալ, ոչ գրաւեալ ռազմախարիսխը պաշտպանելու համար ընդառաջած է Սուրիոյ պահանջին:

3) Որ Ռուսաստան արդիւնաբերական դրամագլուխ չարտածեր Սուրիա, այլ՝ ունի առեւտրական յարաբերութիւններ՝ յատուկ երկու գերիշխան պետութիւններու:

4) Որ Ռուսաստան ընդառաջած է Սուրիոյ պահանջին, նաեւ՝ ինքնապաշտպանուելու համար ՕԹԱՆԻ կողմէ իր դէմ կիրարկուող թշնամական քաղաքականութեան դէմ, որ կը ձգտի Ռուսաստանի անմիջական սահմանակից երկիրներուն մէջ հաստատել ռազմախարիսխներ, կամ՝ գունաւոր յեղաշրջումներով հոն հաստատել իրեն ծառայող դրածոյ իշխանութիւններ... սպառնանալով Ռուսաստանի անվտանգութեան:

Նաթան Պետրոսեան բառերուն տառը կը ֆեթիշացնէ, առանց ստուգելու անոնց իւրայատուկ բովանդակութիւնները: Այս տողերը գրողին համար, անոր ամենէն ցնցիչ գովաբանութիւնն է՝ 1908 թուի սինափանթուրք երիտթուրքերու զինուորական յեղաշրջումին... Մեծ Եղեռնի 103-րդ տարելիցին անգամ:

Գ.Տ.

Պէյրուս, 15 Ապրիլ 2018

Տեսակէտ

Նոր Հայաստանը եւ Հայկական Յեղափոխութեան Վերածնունդը



Ըսին, որ յեղափոխութիւններու ժամանակը անցած է եւ թէ Հայաստանի մէջ հարցեր չեն լուծուիր յեղափոխութեան ճամբով...

Մեր ժողովուրդին վախցուցին, որ մեզ շրջապատող թուրքն ու ատրպէյճանցին անմիջապէս կը յօշոտեն Հայաստանն ու հայութիւնը, եթէ քաղաքացիական անհնազանդութեան՝ Նոյնիսկ խաղաղ ըմբոստացման ճամբով մեր ժողովուրդը ոտքի ելլէ իր փճացած եւ բռնակալ իշխանաւորներուն ու զանոնք պահպանող ստուերային ուժերուն, այլեւ շահագործող ցեցերուն դէմ:

Շեփորեցին, որ վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութեան կերտումին մէջ եզակի ներդրում ունեցած է Սերժ Սարգսեան եւ հարկ է պետութեան դէկին գայն պահել՝ ի հարկին սահմանադրութիւն փոխելով եւ անոր ակարտած երկու շրջան պաշտօնավարութեան իրաւունքին վերանորոգումն ու երկարածգումը «օրինականացնելով»...

Ուրիշ բաներ ալ ըսին եւ ամէն աղբիւրէ ջուր բերին արդէն հիմա պատմութեան անցած Հին Հայաստանի «որօշակիր», իմա՛ մակաբոյծ վերնախաւին շահատակները, հաւասարապէս թէ՛ իշխանաւորի եւ թէ՛ ընդդիմադիրի դիրքերէն:

Արդիւնքը ի՞նչ եղաւ:

Եղա՛ւ ժողովուրդին յաղթանակը:

Եղա՛ւ վերածնունդը հայկական յեղափոխութեան:

Եղա՛ւ շղթայազերծումը Նոր Հայաստանին:

Գիտնք եւ ոչ ոքի համար գաղտնիք է, որ Հայաստանի ժողովուրդին ազատ կամքը ամէն կարգի ընտրական մեքենայութիւններով չարափոխած եւ Ազգային ժողովը բռնագրաւած Հին Հայաստանի սերժ-սարգսեանական պատգամաւորական խաժամուժը տակաւին իր ձեռքին մէջ կը պահէ պետական-կառավարական հազարումէկ լծակներ, որպէսզի փորձէ խոչընդոտել ու արգելակել ըմբոստացած մեր ժողովուրդին եւ յատկապէս պայքարի դաշտ նետուած հայ երիտասարդութեան մերօրեայ յեղափոխական յաղթարշաւը:

Տեսանք եւ պատճառ չունինք անակնկալի գալու, որ Ազգային ժողովի սերժ-սարգսեանական Նորակազմ մեծամասնութիւնը դէմ քուէարկեց վարչապետի համաժողովրդական թեկնածուին ընտրութեան:

Յանցագործ եւ համաժողովրդական դատաստանի եւ արդար պատիժի արժանի իշխանութեան մը վերջին՝ հիւանդագին գալարումներն են ասոնք, որոնք թէեւ յուսահատական են եւ ի վերջոյ դատապարտուած են պարտութեան՝ ժողովրդային ճնշումի



այիքին տակ, բայց նաեւ միաժամանակ ահաւոր ու ողբերգական հետեւանքներու սպառնալիքին տակ կը դնեն Նոր Հայաստանն ու բացառապէս օրինական ու խաղաղ ճանապարհով յառաջ շարժող վերածնեալ հայկական յեղափոխութիւնը:

Անշուշտ կը գիտակցինք, որ ժողովուրդի եւ հանրապետութեան կեղեքումով իրենց կառուցած փարթամ ապարանքներուն մէջ յղփացած Նստած՝ Հին Հայաստանի իշխանաւոր վարչախումբին առաջնորդները այսօր կը խաղարկեն ժամանակի գործօնին վրայ: Սերժ-սարգսեանական ճամբարէն կը տրուին սպառնական ազդանշաններ, թէ Հին Հայաստանի «տէրեր»ը վճռած են ամենայն հանգստութեամբ օրէնսդիր իշխանութիւնը իրենց սեփական ձեռքերուն մէջ պահել... մինչեւ որ ժողովրդային շարժումը յոգնի, կամաց-կամաց կծկուի եւ երէկի իշխանաւորներուն վրայ թուլանայ վերածնեալ յեղափոխութեան ահեղ ճնշումը:

Այո՛, Նոր Հայաստանը իր առաջին ծանր քննութիւնը պիտի յանձնէ Ազգային ժողովի Մայիս 1ի անփառունակ քուէարկութենէն ետք:

Վերածնեալ հայկական յեղափոխութիւնը վերանորոգ թափով իր ձեռքին մէջ պիտի պահէ ժամանակի գործօնը եւ պիտի գտնէ օրինական ու խաղաղ այն ճանապարհը, որուն շնորհիւ ի վիճակի պիտի ըլլայ ժողովուրդի կամքին հաշուետու եւ ենթակայ դարձնելու այսպէս կոչուած խորհրդարանական մեծամասնութիւնը՝ ե՛ւ հաւաքաբար, ե՛ւ անհատաբար:

Աշխարհասփիւռ հայութեան հետ աշխարհի քաղաքական կեանքը հունաւորող եւ հակակշռող մեծապետական ուժերը եւս կ'անդրադառնան, որ Նոր Հայաստանի վերածնունդը իր սնարին մէջ խեղդելու մէկ ու միակ ուղի կայ, որ սադրանքի, հրձիգութեան ու մեքենայութեանց որոգայթն է՝ հայկական յեղափոխութիւնը դուրս բերելու համար իր անպարտելի ուժին գլխաւոր հունէն, խաղաղ եւ սահմանադրական ճամբով ժողովուրդին կամքը գերիշխան դարձնելու հաստատակամութենէն:

Սերժ-սարգսեանական հակայեղափոխական ուժերը պարզապէս իրենց բախտը կը փորձեն եւ կը սպասեն յարմար պահուն, որպէսզի կարենան ձեռք բանալ խաղաղ եւ օրինապահ բողոքի շարժումին մէջ՝ բախումներ եւ մինչեւ իսկ արիւնահեղութիւն հրահրելով:

Հայրենիքն ու սեփական պետութիւնը կրակի տայու գնով իշխանութեան ղեկին կառչած մնալու այդօրինակ վարքագիծը միշտ ալ բնորոշած է սեփական ժողովուրդի հաշուոյն յղփացող մակաբոյծներն ու վնասակար ցեցերը՝ բոլոր ժամանակներու եւ բոլոր միջավայրերու մէջ:

Իսկ հայ ժողովուրդը ահա մեկուկէս դարէ ի վեր կը դիմագրաւէ միեւնոյն պատմական չարիքը: Ամէն անգամ, որ արտաքին ոտխին եւ Հայաստանի ու հայութեան սպառնացող թշնամի ուժերուն դէմ անհաւասար կռուի կը նետուի՝ ականայ կը պարտաւորուի ժամանակ առ ժամանակ ցախաւելը ձեռք առնելու, հայ իրականութիւնը մաքրելու իր կեանքն ու կամքը կրծող ներքին ցեցերէն:

Հին Հայաստանի դառն ու տխուր էջը վերջապէս փակելու այսօրուան իր հպարտութեան եւ խանդավառութեան մէջ՝ մեր ժողովուրդը դարձեալ դէմ յանդիման կանգնած է ներսէն իր դիմադրականութիւնն ու մարտունակութիւնը խոցել փորձող տարրերէն ձերբազատուելու հրամայականին:



Նոր Հայաստանը եւ վերածնեալ հայկական յեղափոխութիւնը այս վերջին շաբաթներուն իրենց մէջ յայտնագործեցին եւ ամրագրեցին բաւարար եւ անհրաժեշտ ուժը՝ օրինական եւ խաղաղ, անզէն եւ համերաշխ ըմբոստացումով ուղի հարթելու մեր սերունդներուն առջեւ:

Հորիզոն բանալու նաեւ ու մանաւանդ աշխարհով մէկ ժողովրդավարական յաղթարշաւով արմատական բարեկարգումի առաջնորդող կարելի եւ յաղթանակած օրինակ փնտռող բոլոր իրաւագրկեալներուն առջեւ:

ՆԱԶԱՐԵԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ

«ԱՍՊԱՐԷՉ»



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Պճեղ մը անուշ սիրտը հրաշքներ կրնայ գործել...

Պուտ մը բարութիւնը դրական մթնոլորտ կը ստեղծէ...

Սիրող սիրտը լոյս կրնայ սփռել իր շուրջը...

Իսկ չարութիւնը միշտ ալ կործանարար է, թէկուզ իբր յանուն բարձր նպատակի...

.....

Մեր փոքրիկ Ես-երը, մեր չնչին փառամոլութիւնները, մեր իշխելակիրքերը, մեր խմբակները, մեր խմբակայինը, մեր հաշիւները, մեր շահերը, մեր աթոռները...Ահա ասոնք են որ կործանարար են համայնքին, ազգին ու հայրենիքին...Պիտի կարենա՞նք ազատագրուիլ ասոնցմէ, յաղթահարել զանոնք...Պիտի կարենա՞նք իսկապէս եւ ճշմարտօրէն մտածել հաւաքականին, ազգայինին մասին, առանց սակայն ճգմելու անհատներու արժանապատուութիւնը...

.....

Մարդ էակը՝ աննշա՞ն հիւլէ մը համայն տիեզերքին մէջ...բայց իր ոգիով կ'ըլլայ ան առնչակից, հաղորդակից Նոյն այդ տիեզերքի, տիեզերական հզօրութեան հետ, տիեզերքի անհունութեան հետ, եւ կը շատնայ, կ'ընդարձակի իր հոգին..., որ չի ճանչնար սահման ու պարագիծ, քանզի ան կը կրէ իր մէջ մասնիկ մը Նոյն այդ տիեզերական անհունութենէն...

.....

Պայծառ հայեացք՝ կեանքին, աշխարհին, մարդոց...Թերեւս նաեւ սա եղած է մեր ապրելու, վերապրելու, մահէն անգամ վերյառնելու գաղտնիքը...մեր կենսահաստատման ոգին...: Լոյսն ենք փառաբաներ յարատեւ եւ ցրեր ենք խաւարը...Բարին ենք պանծացուցեր, Բարին ենք ստեղծեր, յաղթահարելով չարն ու չարիքը...Սերն ենք ապրեր, Սերն ենք սերմաներ, հակառակ մեզ ոչնչացնել սպառնացող ատելութեան հողմերուն...Ազատութիւն ենք տենչացեր, երազեր եւ պարգեւեր նաեւ այլոց, Նոյնիսկ՝ թշնամեաց: Այսպիսին ենք մենք եւ յարատեւելու ենք...

.....



Ո՛չ մէկը կրնայ քեզի իրա՛ւ թշնամութիւն ընել, բացի նոյնիսքն քեզմէ...Մեր արատներն ու թերութիւնները, մեր սխալներն ու մոլութիւնները կը դառնան շատ անգամ մեր տապանաքարը...Նոյնը կարելի է ըսել ազգին ու հայրենիքին համար...Մեր սխալներն են բուն պատճառը մեր անկումներուն...Եթէ կարենանք սրբագրել զանոնք, յայնժամ ո՛չ մէկ թշնամի կրնայ մեզ զգետնել....

.....

Վախկոտ, եսակեդրոն կամ անտարբեր անհատէն ո՛չ մէկ դրական քայլ կարելի է ակնկալել...Նոյնն է պարագան ազգին, եթէ բաղկացած է ան նման անհատներէ գերազանցօրէն...Յանդուգն, արդարակորով եւ Էապէս հայրենասէր ու ժողովրդանուէր անձն է որ կը վտանգէ իր սեփական նեղ շահերը եւ կը պայքարի յանուն համայնական շահերուն եւ խնդիրներուն...կը պայքարի յանուն արդարութեան ընդդէմ անարդարին ու անարդարութեան...յանուն ազատութեան ընդդէմ բռնակալին եւ ստրկութեան...Նման ազգային-բարոյական որակն է որ անհրաժեշտ է մեզի՝ օրի, ջուրի, հացի նման....

.....

Ճշմարտութիւնը որքան հեռու է անոր մատուցումէն, անոր ընկալումէն, ինչպէս բուն իրադարձութիւնը՝ լրատուամիջոցներու հրամցուցածէն...Եւ այսպէս, հանրութիւնը տակաւ կը հեռանայ առարկայական ճշմարիտէն, որ տեւաբար կը ձեռնավարուի, կը բռնաբարուի ու կ'այլասերի՝ ապակողմնորոշելու համար հանրային կարծիքը...Եւ բուն ճշմարիտին փոխարէն ստեղծելու շինծու ճշմարիտը, որ ձեռնտու է աշխարհը կառավարող խումբ մը մարդկանց շահերուն: Սա կարելի է կոչել ճշմարտաշինութիւն, կամ ակելի ճիշդ՝ ճշմարտութեան եղծանում:

.....

Դժուար է ազատ ըլլալ...Մամոնայի եւ նիւթի բռնակալութենէն,դիւրին, հեշտ կենցաղի, զուարճանքներու գայթակղութենէն...փառքի ու դիրքի հրապուրանքէն...կերակրատաշտի ձրի եւ առատ վայելումէն...Չորն ասեմ ու գորն խոստովանիմ...զի անթիւ են մարդը ստրկացնող, անազատ դարձնող թակարդները....

.....

Եթէ ժողովուրդ մը, ազգ մը ճշմարտօրէն կ'ուզէ ազատ ըլլալ, յայնժամ աշխարհի վրայ չկայ ոյժ մը, որ արգելք կարենայ ըլլալ անոր ցանկութեան, առաւել եւս՝ վճռակամութեան...Ազգն ու ժողովուրդը՝ իրենք կամովին, գիտակցաբար թէ անգիտակցաբար, կու կ'երթան օտարացման, այլասերման եւ անազատութեան յորձանքին...: Ազգային խոր եւ ճշմարիտ ինքնագիտակցութիւն եւ յանձնառութիւն են հարկաւոր մեզի՝ մեր ազատութիւնը նուաճելու համար...այլ գործօնները չեն կրնար վճռորոշ ըլլալ այնքան, որքան մեր սեփական հաւաքական գիտակցութիւնը, ոգին, կամքը...Ուրիշները մեղադրելէ առաջ, մենք մեզ պիտի քննադատենք, որ կարենանք ուղղել սեփական սխալը եւ յառաջ երթալ...

.....

Կարելի՞ է միթէ սեփական երջանկութիւնը կառուցել այլոց կամ մէկ ուրիշին դժբախտութեան վրայ, լռեցնելով խիղճի ձայնը, բթացնելով զայն...Խղճի ձայնը



անպայմանօրէն պիտի զարթնու օր մը, եւ անկարելի է ամբողջ կեանք մը ապրիլ, խուսափելով անոր ահեղ դատաստանէն...Երջանկութիւնը, ըստ իս, ճշմարիտ է, եթէ անիկա կ'արտայայտէ այն մեծ ներդաշնակութիւնը, որ կայ սրտին, հոգւոյն, մտքին ու մարմնին միջեւ ...

.....

Յոգիի մեծութիւնն ու ազնուականութիւնն են, որոնք սահմաներ են մեր պատմութիւնը գերազանցօրէն՝ դարերու եւ հազարամեակներու թոհուբոհին ընդմէջէն...անոնք են կազմեր հայ հոգիի կերտուածքը, նկարագիրը...Այդ ազնուականութիւնը չէ՞ որ ներշնչեր է մեզի՝ վերքը երգի վերածելու, տառապանքը յաղթահարելու ստեղծագործական ոգիով, երկնելու արուեստի, մշակոյթի գոհարներ...ազնիւ ու լուսաւոր մտալու իր եութեան մէջ եւ չչարանալու աշխարհին, մարդոց...Յոգիի այս ազնուականութիւնը անգին գանձ է, որուն վրայ պիտի գուրգուրալ աչքի լոյսի պէս, անով ներշնչել յաջողական սերունդները մեր...Առանց հոգիի այդ վեհանձնութեան, ի՞նչ կ'արժեն նիւթական թէ այլ հօգորութիւն, բացի եթէ վերջինը կարենայ պաշտպան, պահապան, նաեւ քաջալեր կանգնիլ անոր ստեղծած արժէքներուն...

.....

Ներքին ազատութիւն...Կա՞յ անելի մեծ հարստութիւն քան ներքին ազատութիւնը: Սա այն իրաւ ազատութիւնն է, որ մարդ-անհատը կը դարձնէ իսկապէս անկախ շրջապատի աղմուկ-աղաղակէն, թիւր արժէքներու քարոզչութեան ազդեցութենէն, կեղծիքէն ու սուտէն...Այն ազատութիւնն է, որով օժտուած մարդը ունկնդիր կ'ըլլայ գերազանցօրէն իր ներքին ձայնին, իր իմաստութեան եւ խղճի հրահանգին, իր յայտնատեսական, ներզգայական ըմբռնումին...Այն ազատութիւնն է, որ կը ներդաշնակէ մարդը իր ներաշխարհէն բխող պահանջներուն հետ, եւ ոչ՝ դուրսէն եկած խաբեպատիր թելադրանքներուն...Ներքին այս ազատութեամբ միայն կարելի կ'ըլլայ ապրիլ սեփական կեանքը, հաւատարիմ ինքն իրեն, իր արժանաւորութեան...: Նոյնը կարելի է ըսել ազգային հաւաքականութեան համար, ընդհանրացնելով այս միտքը:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՔԱՌԵԱԿՆԵՐ ԿԱՄ ՔԱՌԱՏՈՂԵՐ



Ես միշտ խորհուրդն որոնեցի
Ամեն ինչի մեջ տենդագին
Շօշափելին սահման ունէր
Խորին խորհուրդն անսպառ էր...

.....

Թէ որ յայտնես կը մանրանայ
Սէրը խորհուրդ պիտ' ունենայ
Գաղտնիքի քօղ մը սրբագին
Չայն կ'ընծայէ միշտ թանկագին...

.....

Սրտիս տրոփը ես լսեցի
Յուշարարս ճշմարիտին
Ան լոկ կեղծիք չունէր բնաւ
Ականջ դրի անոր միայն...

.....

Մենութիւնս ինծի մնաց
Որպէս ընկեր մը հարազատ
Լաւիս, վատիս միշտ բարեկամ
Ան լոկ սրտանց զիս հասկցաւ...



.....

Թէ սիրտդ բանաս գերթ վարդի թերթեր
Մարդիկ շուտ կու գան եւ բոյրը կ'առնեն
Յետոյ կը մոռնան պարգեւող վարդը
Փուշը լոկ մնայ սրտիդ ընկերը...

.....

Թէ սպասումիդ չարձագանգես
Մի աղաչեր, մի ստորնանար
Ինքնաբեր են սերն ու յարգանք
Կամ կան անոնք, կամ ալ չկան..

.....

Ադորրաւետ լռութիւն է
Մենութիւն է ինքս ինձ հետ
Բայց կը թուի թէ տիեզերքին
Սրտի զարկին եմ ունկնդիր...

.....

Թէ մութն ծածկէ երկինք, երկիր
Լոյսը փնտռէ խորքը սրտիդ
Որ շարունակ կը հուրհրատէ
Լուսաւորչի կանթեղին պէս...

.....

Աշունը մերթ յուշ, մերթ ալ մշուշ է
Մերթ վառ կարօտ է, մերթ ալ թախիծ է
Յրակարմիր ցոլք, ոգեղէն հրայրք է
Ժամանակն ամբողջ իր մէջ կը նիրհէ..

.....

Կեանքը կ'անցնի երագի պէս
Ժամանակի թելին վրայ



Բարի գործը միայն մնայ

Ա՛յն որ կու տաս հոգեւուէր..

.....

Որքան արեւ, սեր ու կարօտ ես ամբարած

Վաղ գարունէն մինչեւ հիմա ինչէ՛ր տեսած

Աշնան տերեւ, դալուկ, նրբին ու հողմահար

Դեռ կը մերժես հուրն այդ յանձնել ու մահանալ...

.....

Արշալոյսը խորհուրդ ունի աղօթալոյս

Երբ տարրերը մայր բնութեան համայնահունչ

Լոյսով օծուին, լոյսը երգեն սիրտով ցնծուն

Լոյսը ըմպեն, լուսայնանան լոյսովն այգուն....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Գրական-Մշակութային

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Օդին մէջ ու մթնոլորտին
Նոր շունչդ տաք կը թեւածէ
Բողբոջներ կան նորոգ կեանքի
Սիրտերուն մէջ մեր սիրահեւ...
Լուսաճաճանչ արեգակներ
Ծագին բոլոր սիրտերէն ներս
Նոր արշալոյս մը կը բացուի
Հայոց երկնէն Վահագնածին...
Միերներիդ ճախրեն ազատ
Ծիծառներուն պէս բերկրալի
Ճիչերն անոնց կանչն են ցեղին
Վերածնած քու սուրբ հողիդ..
Նոր Հայաստան
Մեր հին երազն ես կեանք առած
Մեր պապերէն մեզի հասած
Բայց նոր շունչով արմենական
Նոր աւիւնով գարնանավառ...
Սէ՛ր, ինդոլթի՛ւն, նոր յո՛յս ու յո՛յս
Յորդահոսան կը վարարին



Մենք պիտ' հասնինք խորհրդալոյս

Մեծ Երագին, պանդուխտ հողին...

Հայկեան ոգին պիտ' խոյանայ

Մասիսներու սեզ բարձունքին

Պիտ' աւետէ ողջ աշխարհին

Լո՛յս զարթօնքը Հայստանին:

.....

ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆ

Երջանկութի՛ն, յօրինեցի

քեզ ցօղ առ ցօղ

Արեւներէն հաւաքեցի

քեզ շող առ շող

Բիւր աստղերէն ես քաղեցի

քեզ ցոլք առ ցոլք

Դաշտ ու անդէն քեզ տուն բերի

ծաղիկ-ծաղիկ

Բիւր սիրտերէն շունչդ առի

ժպիտ-ժպիտ

Հոգիներէն լոյսդ առի

կաթիլ-կաթիլ

Բառ ու բանէն հեւքդ առի

հնչիւն-հնչիւն

Սրտիս տրոփին քեզ խառնեցի

Երջանկութի՛ն

Շաղախեցի քեզ հոգւոյս հետ

մտերմագոյն

Որ միշտ մնաս ինձ հետ յաւետ

Երջանկութի՛ն...



.....

Կ՝ ՈՒՉԵՄ ԵԼԼԵԼ

Կ՛ուզեմ ելլել վեր ամպերէն
Խրիլ երկնի կապոյտին մէջ
Լոյսեր իլել արշալոյսէն
Լուսողողուիլ մշուշագերծ...

Սանդուղ-սանդուղ վեր բարձրանալ
Յենած բառիս պիրկ յենակին
Գորշ ամպերուն համբոյր մը տալ
Որ փարատին, տեղ տան լոյսին...

Գուցէ անոնք գորովագուրկ
Մարդկանց ցաւերն են թանձրացած
Չամբոյրով մը տաք, սիրագուլթ
Տեղան անձրեւ խաղաղարար...

Ծիածանագեղ թող կամարուի
Չոգիս՝ երկինք ու երկրի հետ
Չաշտութեան ուխտս նորոգեմ
Ըմպեմ լոյսը միշտ ցնծագին...

.....

ՍԵՐՍ ԱՌ ԹԵ՛Չ

Սերս առ քե՛զ, իմ հայրենի՛ք
Գոյներ ունի լուսածածան
Մերթ կ'ըլլայ ան հրակարմիր
Սիրոյս նման հրաշուշան
Մերթ կը տնքայ լուռ ու յուշիկ



Շամանդադ մը մշուշապատ
Եւ կ'անձրեւէ բիւրեղափայլ
Մաքրամաքուր ու երկնաշիթ..
Մերթ խոց կ'ըլլայ կարօտախանձ
Հրաշէկ լաւա մը մթամած
Կ'այրէ, կ'այրէ ու չի սպառփր
Ծուխը միայն ինձ կ'երեւի...
Մերթ ալ կ'ըլլայ երկնակապոյտ
Լազուրաջինջ, լուսացնծուն
Կը վարարէ հոգիս համակ
Կ'ըլլայ տիեզերք մ'անեզրական..
Ծիածանի երանգներով
Փայլատակէ սեր հոգեթով
Սէրս դառնայ լուսէ ովկեան
Ես լոկ նաւակ ալետատան
Որ պիտ' հասնի իր ափերուն
Ու պիտ' գտնէ հանգրուանն հուսկ...

.....

ՄՈՒՍԱՅԻՍ

Դժուար ժամերո՛ւս դուն յայտնուեցար
Երբ իմ բորբ սիրտս կը պոռթկար ցաւէն
Եւ չկար սի՛րտ մը որուն պարպուէր
Եւ լիցքաթափուէր ու անդորրանար...

Բառերս գողտրիկ ինչպէ՛ս շարուեցան
Հատիկ առ հատիկ ու մարգարտաշար
Դուն՝ յուշարար վեհ ու հըրաշագօր
Երկնէն վար իջած խորին խորհուրդով...



Եւ ես դարձայ լոկ խոնարհ քարտուղար
Երկնատուր բառդ լոկ արձանագրող
Դուն յուշեցիր ինձ աղօթք սրբազան
Խոստովանանքի գիրեր հոգեթով...

Դուն ես բալասանն իմ բիւր ցաւերուն
Բուժիչ սպեղանի, վերքերուս դարման
Այլեւ տուիչն ես բարեաց լուսատու
Կաւիս հողեղէն՝ թելեր երկնաւլաց:

.....

ԱՆՅՈՒՄԵՍ ԵՏՔ

Անցումես ետք այս աշխարհէն
Ոգիս անմահ պիտի ճախրէ
Անհուններուն մէջ թելածէ
Փնտռելով դեռ ծաղիկն լուսէ..
Պիտ' յայտնուի՝ շո՛ղ մը ճաճանչ
Պիտի գգուէ ձեզ աննկատ
Պիտի փարի ձեր տաք կրծքին
Յամբոյր դրոշմէ կարօտագի՛ն...
Ազատաբա՛ղձ պիտ' որոնէ
Ա՛յն որ փնտռեց ու չգտաւ
Թելերովն իր պիտի գրկէ
Ա՛յն որ միշտ ալ մնաց անհաս..
Բայց չեմ գիտեր՝ պիտի զգա՞յ
Գորովը տաք սիրտերուն վառ
Պիտ' հրճուի՞ ինչպէս հիմա
Երբ տաք սիրտ մը պարուրէ զայն...



.....

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ի՞նչ բառեր կան մեր սրտին մէջ

Որոնք պիտի չըսուին երբեք

Լուռ արտասուեն այնտեղ յուշիկ

Չըսուած խօսքի ցաւով լռին...

Ի՞նչ պահեր կան որք պիտ'անցնին

Դրոշմն անոնց պիտի զգանք

Եւ պիտի լանք կորուստն անդարձ

Պահերուն այդ անկրկնելի...

Սիրող սրտին զգուանքը տաք

Պիտի զգանք երբ ա՛լ չկայ

Ներկայ պահը պիտ'ըլլայ թանկ

Երբ ան դարձած է ա՛լ անցեալ..

.....

ՄԱՅՐ

Չորս տառի մէջ՝ անչափ մեծ սի՛րտ

Մորմոքող խի՛ղճ է պարփակուած

Չորս տառի մէջ՝ սիրոյ տիեզէ՛րք

Անհունութի՛ն կայ թանձրացած...

Չորս տառի մէջ՝ անսահման գո՛ւրթ

Ու գորովանք կան խտացած

Մեծ նուիրո՛ւմ, զոհաբերո՛ւմ

Անանձնական սէ՛ր-ճառագայթ...



ՄԷն մի տառը սիրոյ հրա՛ջք է

ՄԷն մի տառը սիրոյ թռիչք է

Որ թել առած կրնայ շալկել

Լեռան չափ մեծ ու հսկայ բեռ...

ՄԷն մի տառը արարչական

Ներուժ ունի այնքան անե՛զր

Կարծես Աստուած Ի՛նքն է կնքեր

Փոխանորդ մը երկրի վրայ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Գրական-Մշակութային

Կոստան Զարեան . Հայ Գրականութեան Իմաստասէր Գեղապաշտը

Ն.



Հայ մարդու իմացական ու յուզական աշխարհը՝ Հայ Յոգին խորապէս պեղելու եւ գեղեց-կագոյն լեզուով ու ոճով արտայայտելու առիթնող արուեստին մեծ վարպետն է Կոստան Զարեան (Կոստանդին Եղիազարեան, 1885-1969), որուն ծննդեան 133-րդ տարեդարձը կը նշենք Փետրուար 2-ին:

Կ. Զարեան գեղարուեստական եւ իմաստասիրական մեծատաղանդ ժառանգութիւն մը կտակեց հայոց սերունդներուն՝ պատգամելով, որ

«Ջղագրգռուած, զգացական հիւանդութիւններով տառապող, վախով, նախանձով, ախտաւոր ատելութիւններով ցնցուած մեր հայ աշխարհում մթազնած է այն քննանիշը, որով գիտակցական մարդիկ ի վիճակի են ազնիւօրէն մօտենալու եւ զննելու կեանքի երեւոյթները:

«Ամէն ինչ ընթանում է գաւառային ճղճիմ մտայնութեան նեղ եւ մթազնած լաբիրինթոսներում:

«Շատերը կարծում են, որ եթէ կառուցեն հայ կոչուած ոճով շէքեր եւ գրեն հայերէն բառերով, փրկած կը լինեն հայութեանը բնորոշ արտաքին ձեւը: Արդ, ինչ որ անուանում են հայ ճարտարապետութիւն, հին եկեղեցիներից պոկած մակերեսային բեկորներ են, որոնք ժամանակին, իրենց ամբողջութեան մէջ, անբաժանելի վիճակում, դրսեւորել են որոշ կրօնական մի աշխարհատեսութիւն, մի տիրական խորհուրդ, ապրելու եւ զգալու մի կերպ:

«Ստեղծագործական անկարողութեան պատճառով վերաձեւել մեծ Տրդատների ոճը եւ մէջը՝ հայ ոգին եւ հաւատքը բնորոշ[ող] աստուածութեան տեղ՝ բնակեցնել օտարի կայսերապաշտութեան բռունցքներով օժտուած բռնակալ ոստիկաններին, դա խաբէութիւն է — կեղծիք:

«Կամ՝ հայերէն լեզուով գրել օտարի պարտադրած գաղափարները, դա հայ գրականութիւն չէ:

«Ժողովրդների ստեղծագործական կեանքը զարգանում է ուրոյն հոգեկան եւ մտային արքետիպների թելադրանքների տակ: Հայ արուեստը եւ գրականութիւնը հարազատ են այն ժամանակ, երբ նրանք ներկայանում են իբրեւ անմիջական եւ անփոփոխ արտայայտութիւնը հայ հաւաքական ենթագիտակցութեան:

«Այդ հաւաքական ենթագիտակցութիւնը նման է այն ընդերկրեայ բազմաթիւ հոսանքներին, որոնք, օրինակի համար, յամառօրէն շարունակում են կեանք տալ «գիտականօրէն» եւ անմիտօրէն վատնուող Սեւանին:



«Թող այդ գեղեցիկ լճի ափերը իջնեն, քոսոտեն, բորոտեն՝ մարդկանց անխելքութեան պատճառով: Այնումենայնիւ նրանք մի օր պիտի վերածնունեն, պիտի վերադառնան իրենց յաւիտենական կերպին եւ երգին, հողերի տակ թաքնուած թարմ, զուլալ ջրերի մղումով:

«Այդ պատճառով էլ չկայ այնտեղը կամ այստեղը:

«Այդ քննանիշը յարմարում է մեր կեանքի բոլոր երեւոյթներին:

«Հայ ոգին եւ Հայաստանը ներկայ են այնտեղ, ուր ներկայ է հայ հաւաքական գիտակցութեան փրկարար հրամայականը»: (Կոստան Չարեան, «Նաւատոմար», Պըրքէյ, Բալիֆոր-նիա, 17 Ապրիլ 1959):

Հայ ժողովուրդի հաւաքական գիտակցութեան այս աստիճան խորամոյն ընկալումն ու ներշնչանքը ունէր հայ գրականութեան մեծատաղանդ այս դէմքը:

Բանաստեղծ, արձակագիր, արուեստաբան եւ գրականագետ Էր աւագանի անունով Կոստանդին Քրիստափորի Եղիազարեան, որ 1885 թուականի Փետրուար 2ին լոյս աշխարհ եկաւ Շամախի քաղաքին մէջ (այժմ՝ Ատրաբեյճանի մէջ շրջան):

Հետաքրքրական է նշել, որ Կոստան Չարեան, Շիրվանզադէ եւ հայ բեմարուեստի մեծ վարպետ Յովհաննէս Աբելեան երեք քոյրերու որդիներ եղած են: Կոստանի հայրը՝ Քրիստափոր Եղիազարովը ցարական բանակի զօրավար էր:

Կոստան չորս տարեկան էր, երբ մահացաւ հայրը: Փոքրիկին տարին Պաքու, ուր ան յաճախեց ռուսական գիմնազիա: Աւագ եղբայրը տասը տարեկան Կոստանին տարաւ Փարիզ, ուր ան յաճախեց եւ աւարտեց Սեն-Շերմեն քոլէճը: Վերադարձաւ Կովկաս, ուր սակայն կարճ ժամանակ մնաց, որովհետեւ մեկնեցաւ Պելճիքա՝ համալսարանական բարձրագոյն ուսման հետեւելու համար գրականութեան եւ ընկերային գիտութեանց ճիւղերուն մէջ: Ստացաւ փիլիսոփայութեան դոկտորի աստիճան եւ հաստատուեցաւ Փարիզ, ուր աշխոյժ մասնակցութիւն բերաւ ժամանակի Նորարական շարժումներուն՝ գրականութեան եւ գեղարուեստի բնագաւառներուն մէջ:

Իր ողջ եռութեամբ հայ մշակոյթին եւ հոգեմտաւոր ժառանգութեան կապուած երիտասարդ Կոստանը առիթ չէր ունեցած հայերէնի իր իմացութիւնը գրական մշակման մակարդակին բարձրացնելու: Իր սկզբնական գործերը գրած էր ֆրանսերէնով եւ իտալերէնով. կը տիրապետէր նաեւ անգլերէնին: Իր առաջին գիրքը՝ «Երեք երգեր»ը գրած էր իտալերէնով (նոյնը հայերէն լեզուով լոյս ընծայեց 1931 թուին: Այդ երկարաշունչ բանաստեղծութեանց հիման վրայ, հետագային, երաժիշտ Օթթորինօ Ռեսպիգին ստեղծեց սիմֆոնիա):

Հետեւաբար, հայերէնի չիմացութեան այդ մեծ բացը զոցելու մտադրութեամբ՝ 1910էն 1912 Կոստան Չարեան հայերէն սորվելու համար ապրեցաւ Վենետիկի Ս. Ղազար վան-քին մէջ:

Երբ արդէն հայերէնին ալ տիրապետած էր, Կոստան Չարեան որոշեց հաստատուիլ Պոլիս, ուր 1908ի Սահմանադրութեան հռչակումէն ետք գրական-մշակութային կեանքը աննախընթաց թափով ծաղկում կ'ապրէր: Դանիէլ Վարուժանի, Յակոբ Օշականի, Գեղամ - Բարսեղեանի եւ Ահարոն Տատուրեանի հետ միասին՝ Կոստան Չարեան գլխաւոր դեր ունեցաւ գրականութեան ու գեղարուեստի նորարական հանդէսին՝ «Մեհեան»ի հիմնադրութեան մէջ, որուն առաջին համարը լոյս տեսաւ 1914ի Յունուարին: «Մեհեան»ը



միայն եօթը համար լոյս տեսաւ եւ փակուեցաւ Առաջին Աշխարհամարտի բռնկումին հետեւանքով:

1914ի Դեկտեմբերին, գրական-գեղարուեստական աշխատանքի ազատ բեմ գտնելու հեռանկարով, Կոստան Չարեան հեռացաւ Պոլիսէն, անցաւ Պուլկարիա եւ հոնկէ ալ Ֆլորենցիա, ուր ապրեցաւ եւ ստեղծագործեց մինչեւ Աշխարհամարտի աւարտը: 1919-22ին Կ. Չարեան վերստին Կ. Պոլիս է, ուր Գ. Գալֆայեանի, Վահան Թեքէյեանի եւ Շահան Պերպլերեանի հետ կը հրատարակէ «Բարձրավանք» հանդէսը: 1922-24ին, Երեւան հաստատուած՝ ան համեմատական գրականութեան պատմութիւն կը դասաւանդէ Երեւանի Պետական Յամալսարանին մէջ: 1925ին, խորհրդային կարգերուն եւ կաշկանդումներուն չդիմանալով, Կոստան Չարեան դարձեալ կը մեկնի Փարիզ: Կը հիմնէ եւ կը խմբագրէ արուեստի, գրականութեան եւ փիլիսոփայութեան «Բաբելոնի Աշտարակ» ամսագիրը (ֆրանսերէն):

Այնուհետեւ՝ Կ. Չարեան ովկիանոսը կտրեց եւ հաստատուեցաւ Մ. Նահանգներ, ուր - Պոսթըրնի «Յայրենիք» ամսագրի էջերուն լոյս ընծայեց իր «Անցորդը եւ իր ճամբան» (1927), «Բանկօօպը եւ մամուլի ոսկորները» (1931-34), «Երկիրներ եւ աստուածներ» (1935-38), «Կղզին եւ մի մարդ» (1955) գործերը, ինչպէս եւ հռչակաւոր «Տատրագոմի հարսը» երկարաշունչ բանաստեղծութիւնը:

Մ. Նահանգներու տարածքին Կոստան Չարեան վարեց դասախօսական պաշտօններ: 1930ականներուն դասաւանդեց Պրըքլիի (Քալիֆորնիա) համալսարանին մէջ: 1944-46ին հայագիտութիւն դասաւանդեց Նիւ Եորքի Քոլումբիա համալսարանին մէջ: 1946ին Նիւ Եորքի մէջ հիմնեց եւ խմբագրեց «Յայկական Քառամսեակ» անգլերէն հանդէսը: 1952-54ին արուեստի պատմութիւն դասաւանդելու համար Պէրյուի Ամերիկեան համալսարանին մէջ՝ Կոստան Չարեան հաստատուեցաւ Լիբանան: Այդ շրջանին էր, որ երջանկա-յիշատակ Ամենայն Յայոց Վազգէն Ա. Կաթողիկոսէն Յայաստան հաստատուելու հրաւեր ստացաւ: 1961ին ներգաղթեց Յայաստան եւ 1962էն մինչեւ 1969ի Դեկտեմբեր 11ի իր վախճանումը, աւագ գիտաշխատողի աշխատանք կատարեց Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանին մէջ:

Կոստան Չարեանի գլուխ-գործոցը կը համարուի Մեծ Եղեռնի, Յայաստանի անկախութեան եւ հուսկ խորհրդայնացման նուիրուած «Նաւը լերան վրայ» ծաւալուն վէպը, որ Մ. Նահանգներու մէջ 1943-ին իր առաջին հրատարակութիւնը ունենալէ ետք, գաղափարախօսական աղճատումներով 1963-ին իր երկրորդ հրատարակութեան արժանացաւ Խորհրդային Յայաստանի մէջ՝ ընդհանուր դժգոհութեան այլք բարձրացնելով սփիւռքի տարածքին:

Աւելի քան 84 տարի ապրեցաւ Կոստան Չարեան, պատկառելի վաստակ մը ստեղծեց թէ՛ որակի, թէ՛ քանակի առումով եւ սերունդներու յիշողութեան մէջ անմահացաւ իբրեւ հայ գրականութեան մեծ իմաստասէրն ու գեղապաշտ արուեստագէտը:

Անմահացաւ՝ շնչաւորելով Յայու Յոգին իր խորութեամբ եւ խռովքով.-

«Պէտք է գանազանել. գաղթականը եւ տարագիրը երկու իրարամերժ վիճակներ են:

«Գաղթականը՝ անողոք պարագաներից մղուած՝ տեղափոխուում է մի որեւէ օտար երկիր եւ ճիգ անում գետեղուելու ուրիշների կեանքում: Տնտեսականի հրամայականի տակ՝ նա



պարտադրուած է յարմարուելու, նորաձեւուելու, կապիկանալու, թուրքականալու: Լինելու ո՛չ թէ ինքը, այլ ուրիշ:

«Նա ստուեր է, որ որոնում է նոր բարոյական մարմին, նոր լեզու, գոյանալու եւ ապրելու նոր կերպ ու ձեւ:

«Եւ երբ նա գտնում է այդ նոր մարմինը՝ անհետանում է:

«Ուրիշ է տարագիրը:

«Նա ժամանակաւոր այցելու է, անցորդ, որի անհատականութիւնը յաւիտենապէս խարսխուած է իր իսկութեան մէջ, իր դարաւոր հաւաքական ուրոյն կազմում, իր ցեղային ենթագիտակցութիւնում:

«Տարագիրը հոգեպէս, մտաւորապէս շարունակում է ապրել մտայնական եւ ժառանգական այն ծովում, որի թաքնուած հոսանքները, կրակով եւ երկաթով ծեծուած փոթորիկները ներկայ են իր արիւնի, մկանուկների եւ ուղեղի ծալքերում: Նա մշտնջենական նաւարկող է, որի Ողիսականը մի՛ նպատակ ունի միայն՝ հասնել եւ լիովին դրսեւորել իր իսկութիւնը:

«Իսկական ստեղծագործը,- եւ խօսքս նրանց մասին է եւ միայն նրանց մասին,- միշտ տարագիր է: Այստեղ թէ այնտեղ: Նա մշտնջենական որոնողն է, բաղձողը եւ չգտնողը, հոգու ծարաւով եւ անօթութիւնով տառապողը:

«Ասեմ նաեւ, որ այնտեղ, շղթայուած մեր հայրենիքում ապրող տարագիրների աւելի յուսահատական վիճակի են մատնուած, քան մենք, որովհետեւ եթէ նրանց մարմնական սնունդը առատ է, [ապա] նրանց միտքը եւ թռիչքը կաշկանդուած է, եւ նրանց արժանապատուութիւնը ամէն մի վայրկեան ենթարկուած է գռեհիկների եւ բթամիտների վիրաւորանքներին:

«Մի բանաստեղծ,- ասում է Գեօթէն, 1832ի Մարտ ամսին, Էկկերմանին,- որ ուզում է քաղաքականութեան ծառայել, ստիպուած է ամբողջովին նետուել մի կուսակցութեան մէջ, եւ այդ անելով՝ նա կորցնում է բանաստեղծի իր անհատականութիւնը եւ պետք է հրաժեշտ տայ աշխարհին նայելու իր բնածին անկողմնակալութեան եւ գլխին անցընի տիմարութեան եւ կոյր ատելութեան գլխանոցը»:

«Աւա՛ղ, այդ գլխանոցի բոժոժները զրնգում են հայ կեանքի բոլոր անկիւններում»: (Կոստան Չարեան, «Գաղթականը եւ Տարագիրը», «Նաւատոմար»):

Այսպէ՛ս, Տարագիր Հայուն ձայնը յաւերժացնող հեղինակն է Կ. Չարեան: Ո՛չ «Թափառական Հայ»ուն, ոչ ալ «Գաղթական Հայ»ուն: Չարեանի մտապատկերին ամէնէն հոգեհարա-զատ յղացքը կրնայ նկատուիլ «Պանդուխտ Հայ»ը, որուն ձայնը յաւերժացնող հայ գրողներու փաղանգին վերջին դրօշակիրը եղաւ Չարեան:

Կոստան Չարեան նոր հորիզոններու բացաւ հայրենի հողէն հեռու ապրելու մարդկային կեցութեան «դատապարտուած» հայ մարդոց ներաշխարհը, անոնց հոգերն ու սերերը, երջանկութեան եւ վիշտի արցունքները, յաղթանակի փառքն ու պարտութեան արհաւիրքը:

Աղբիւր՝ Հայրենիք շաբաթաթերթ